Աշոտ Ն. Հայրունի
Պատմ. գիտ. դոկտոր

ԿԱՐԵՆ ՅԵՊԵԻ ՓՐԿԱՐԱՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ: ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՅԱՑՔ

Մաս երկրորդ: Մեծ մարդասերի գործունեությունը Հալեպում*

Բանալի բառեր – Կարեն Յեպե, Ուռհա, Հալեպ, Մեծ եղեռն, Ազգերի լիգա, Յոհաննես Լեփսիուս, Գերմանական Արևելյան առաքելություն, առևանգված հայերի ազատագրում:

Մուտք

Հոդվածի առաջին մասում, որը հրատարակվել է «Վէմ» հանդես նախորդ համարում, լուսաբանվել է հայ ժողովրդի նվիրյալ, մեծ մարդասեր Կարեն Յեպեի գործունեության առաջին շրջանը:

Հոդվածի երկրորդ մասում լուսաբանվում է աշխարհամարտի ընթացքում և դրանից հետո Յեպեի իրականացրած համալիր հայափրկիչ գործունեությունը, որի կենտրոնավայրն արդեն Հալեպն էր:

1. Կարեն Յեպեի փրկարար աշխատանքներն Առաջին աշխարհամարտից հետո

1920-ին Ազգերի լիգայում (ԱԼ) բուռն քննարկումների առարկա էր դարձել Մեծ եղեռնի ընթացքում առևանգված և դեռ բռնությամբ մահմեդականների տներում պահվող հայ կանանց ու երեխաների ճակատագիրը[1]: Քանի որ նրանց պարագայում խնդիրը վերաբերում էր միջազգայնորեն դատապարտված և արգելված այնպիսի մի հանցագործության, ինչպիսին ստրկավաճառությունն էր, ուստի ԱԼ-ն իրեն պարտավորված էր զգում գործուն քայլեր ձեռնարկել այդ դժբախտների փրկության նպատակով[1]: Ըստ այդմ, նա իր՝ 1920 թ. դեկտեմբերի 15-ի անդրանիկ նիստում վճռեց ստեղծել մի հանձնաժողով, որը, մեկնելով Արևելք, պետք է հնարավորինս մանրամասն տեղեկություններ հավաքեր մահմեդականների տներում

*Հոդվածն ընդունվել է տպագրության 20. 12. 2017:

1 Տես **Jeppe K.,** Vom Hilfswerk für die verschleppten armenischen Frauen und Kinder in Syrien und Nord-Mesopotamien, „Der Orient“, 1923, S. 21.

պահվող հայ կանանց ու երեխաների վերաբերյալ[2]: Հանձնաժողովը, որի կազմում ոմն դր. Քենեդիից և Էմմա Կուշմանից բացի՝ ներգրավվեց նաև Կարեն Յեպեն, Ազգերի լիգայի՝ 1921 թ. սեպտեմբերի 21-ի նիստում ներկայացրեց իր հետազոտության արդյունքները, ըստ որոնց՝ զինադադարին հաջորդող շրջանում 90.000 հայեր մահմեդական գերությունից ազատագրվել և տեղավորվել էին որբանոցներում, իսկ շուրջ 73.000 երեխաներ և բազմահազար կանայք ու աղջիկներ դեռ գտնվում էին գերության մեջ[3]:

Ազգերի լիգան իր սեպտեմբերի 23-ի նիստում որոշում ընդունեց փրկարար աշխատանքները սկսելու մասին, որոնց կազմակերպումը և իրականացումը հանձնարարվեց նշված հանձնաժողովի անդամներին: Այդպիսով նրանք ստանում էին մի նոր, այսպես կոչված «Կառավարման մարմնի» կարգավիճակ՝ գործելով Ազգերի լիգայի կոմիսարի ենթակայության ներքո[4]: Ճակատագրի բերումով Յեպեն պետք է դառնար նաև այս նոր, դժվարին առաքելության ոգին և հերոսը:

Անշուշտ, հեշտ չէր ստանձնել նման մեծ պատասխանատվություն, երբ Ազգերի լիգան, համաձայնելով հովանավորել որբերի և կանանց ազատագրումը, նրանց ճակատագրերի հետագա տնօրինման հարցում որևէ հանձնառություն չէր կամենում ստանձնել: Այն միտքը, որ դժբախտ մարդիկ մահմեդականների տներից դուրս բերվելուց հետո պետք է մատնվեին բախտի քմահաճույքին, Յեպեի մեջ հոգեկան մեծ երկվություն էր ստեղծել: «Նախնական հետազոտության արդյունքն այնպիսին էր, որ այստեղ մի ահռելի մեծ առաջադրանք իր լուծմանն էր սպասում,- նշում էր նա հետադարձ հայացքով, -Նույնիսկ եթե բանտարկված հայերն ազատագրվեին, ապա նրանց փրկությունը միայն կիսով չափ կատարված կլիներ: Նրանց պետք էր նաև հնարավորություն ընձեռել, որ դարձյալ կարողանային իրենց ժողովրդի մեջ տեղ գբաղեցնել, այո, ամենաճիշտը կլիներ այն, որ այդ տեղը նրանց համար նախապես ստեղծվեր: Չէ՞ որ նրանք ամբողջությամբ խլված էին յուրայիններից, մեծ մասն այլևս որևէ մերձավոր չէր գտնի և կմատնվեր միայնության»[5]:

Երբ Յեպեն ի դեմս հայերի դանիացի բարեկամների և Լեփսիուսի գտավ օգնականներ, որոնք պատրաստ էին զորավիգ լինել և նրա հետ ստանձնել պատասխանատվությունը, նրա մեջ ամրապնդվեց այն հույսը, որ համատեղ ուժերով հնարավոր կլիներ այդ դժբախտ մարդկանց հետագա գոյատևման համար միջոցներ հայթայթել[6]: Ուստի նա կարող էր կայացնել իր վճիռը և ձեռնամուխ լինել փրկարար աշխատանքների կազմակերպմանը:

Լեփսիուսի հետ համագործակցության հեռանկարները պարզաբան-

2 Տես Maßnahmen des Völkerbunds zur Rettung der von Türken verschleppten armenischen Frauen und Kinder, „Der Orient“, 1922, S. 9.
3 Տես նույն տեղում:
4 Տես նույն տեղում:
5 **Jeppe K.,** Vom Hilfswerk für die verschleppten armenischen Frauen und Kinder in Syrien und Nord-Mesopotamien, „Der Orient“, 1923, S. 21.
6 Տես **Sick I. M.,** Karen Jeppe im Kampf um ein Volk in Not, Stuttgart, „Steinkopf“, 1929, S. 193. Հայ ժողովրդի դանիացի բարեկամների կոմիտեն, որին անդամակցում էր Յեպեն, նրան խորհուրդ էր տալիս առաջարկն ընդունել՝ երաշխավորելով իր աջակցությունը: Տես նույն տեղում:

վեցին 1921-ի սկզբին (Զատիկից մեկ շաբաթ առաջ), երբ Յեպեն հիշյալ հանձնաժողովի կազմում Արևելք մեկնելիս Պոտսդամում այցելեց նրան և իրազեկեց Ազգերի լիգայի նոր մտադրության մասին[7]: Հատկանշական է, որ չնայած նախապես ծրագրվել էր աշխատանքները սկսել Կ. Պոլսի մերձակա՝ Անտանտի կողմից գրաված տարածքներում, սակայն Լեփսիուսի հետ հանդիպումից հետո Յեպեն վճռեց հնարավորության դեպքում հաստատվել Ուռհայում, իսկ եթե Թուրքիայի ներքին անկայունությունը դա չթույլատրեր, ապա Հալեպում[8]: Ընտրությունը, անշուշտ, պատահական չէր: Ուռհան Լեփսիուսի և Յեպեի վաղեմի աշխատավայրն էր, և տարիների փորձառությունն ու ճանաչողությունն այնտեղ կարող էին խիստ օգտակար լինել: Իսկ Հալեպը նախընտրելի էր որպես ճանապարհների խաչմերուկ և հյուսիսային Միջագետքի բնական կենտրոն, որտեղ առևանգված կանանց և երեխաների թիվը, ըստ հավաստի տվյալների, պետք է խիստ մեծ լիներ, և որը միևնույն ժամանակ Ուռհայից հեռու չէր: Այդ ենթադրությունները հաստատվեցին նաև Յեպեի ճանապարհորդության ընթացքում կատարված նախնական հետազոտության արդյունքներով, ըստ որոնց՝ միայն Սիրիայում և Միջագետքի հյուսիսային շրջաններում կային շուրջ 30.000 առևանգված կանայք և երեխաներ[9]:

Թուրքիայում շարունակվող պատերազմական իրադրության և ներքաղաքական անկայունության պայմաններում Ուռհան, բնականաբար, չէր կարող հենակետ դառնալ փրկարար աշխատանքների համար, և Յեպեն նպատակահարմար գտավ հաստատվել Հալեպում: Մահմեդականների մոտ գտնվող հայ կանանց և երեխաների ազատագրումը չափազանց բարդ խնդիր էր, քանի որ Ազգերի լիգան այդ նպատակով մահմեդական իշխանությունների վրա որոշակի դիվանագիտական կամ ռազմական ճնշում գործադրելու մտադրություն չուներ, և Յեպեն հարկադրված էր գործել միայնակ՝ ապավինելով սեփական ուժերին և հնարամտությանը[10]: Նա հարկադրված էր նաև ըստ հնարավորին խուսափել մահմեդականների հետ առճակատումներից, ինչը գրեթե անհնար էր թվում, եթե հաշվի առնենք, որ Մեծ եղեռնից արդեն անցել էր յոթ տարի, և այդ ընթացքում ճանաչելով «հայկական ռասան», հայ կանանց և երեխաների «բնածին օժտվածությունը»՝ մահմեդականները չէին համակերպվի նրանցից հրաժարվելու մտքի հետ: «Որպես կանոն մահմեդական ամուսինը հիացած է իր հայ կանանցով,- նշում էր այդ առթիվ Կ. Յեպեն,- քանի որ նրանք ավելի բարձր մարդկային տեսակ են, քան մահմեդական կանայք»[11]:

Նրան, սակայն, բավականաչափ հայտնի էր հայ կնոջ «խորշանքը պարտադրված ամուսնու հանդեպ», ուստի նա հույս ուներ, որ եթե կանանց արիություն ներշնչվեր և նաև ճանապարհին որոշ օգնություն ցուցաբերվեր, ապա նրանք առանց տատանվելու կդիմեին փախուստի[12]:

7 Տես **Lepsius J.,** Mitteilung, „Der Orient“, 1921, S. 62-63.
8 Տես նույն տեղում:
9 Տես **Jeppe K.,** Vom Hilfswerk für die verschleppten armenischen Frauen und Kinder in Syrien und Nord-Mesopotamien, „Der Orient“, 1923, S. 21.
10 Տես նույն տեղում:
11 **Jeppe K.,** Rettung aus muhammedanischer Sklaverei. Wer hilft dazu?, „Der Orient“, 1924, S. 59.
12 Տես **Jeppe K.,** Vom Hilfswerk für die verschleppten armenischen Frauen und Kinder in Syrien und Nord-Mesopotamien, „Der Orient“, 1923, S. 21.

Յեպեի համոզմամբ՝ նույնը վերաբերվում էր այն երեխաներին, ովքեր աքսորի ժամանակ եղել էին 5–12 տարեկան, և դեռ չէին մոռացել իրենց ազգային պատկանելությունն ու եղերական անցյալը: Այլ էր խնդիրը, սակայն, մանկահաս երեխաների պարագայում, որ իրենց մայրերից խլվել էին օրորոցային տարիքում և ապրելով մահմեդականների մեջ՝ իրենց ազգային պատկանելության մասին գաղափար իսկ չունեին: Այդպիսիներին փրկելու հնարավորություն գրեթե չկար, քանի որ խիստ դժվար էր պարզել նրանց ինքնությունը, և բացի այդ՝ նրանք կարող էին մահմեդական միջավայրից խլվել միայն ուժային միջոցներով, որոնք Յեպեն իր տրամադրության տակ չուներ[13]:

Ինչևէ, չնայած վերոնշյալ բարդություններին՝ նա լիահույս էր, որ կկարողանար իր առաջադրանքն իրականացնել, և որ ամենաուշագրավն է, նրա լավատեսությունը պայմանավորված էր գլխավորապես հայ ժողովրդի ազգային և բարոյահոգեբանական նկարագրի քաջատեղյակությամբ: «Ու՞մ զարմանք չի պատճառել հայերի ինքնապահպանման անհաղթելի բնազդը, որը նրանց ոչ միայն որպես անհատների, այլև շատ ավելի որպես ժողովրդի է հզորացնում,– նշում էր նա իր տեղեկագրերից մեկում: –Կարելի էր կանխատեսել, որ այն հսկայական ուժը, որը հայ ժողովուրդն իրեն հատկացված դիրքում որպես մեր ռասայի, մեր մշակույթի, մեր կրոնի պիոներ Ասիային դեմ հանդիման պահպանել է, և որը վերջին տարիների անլուր իրադարձությունների ընթացքում ևս իր ազդեցիկությունը ի հայտ է բերել, այժմ նրանց միայնության մեջ նույնպես կպաշտպաներ մահմեդականներին բաժին դառնալուց»[14]:

1922 թ. գարնանից հաստատվելով Հալեպում՝ Յեպեն այնտեղ հիմնեց մի՝ «փախստականների կացարան», որտեղ նրանք կարող էին առժամանակ ապրել, մինչև հոգ կտարվեր իրենց հետագա ճակատագրի մասին: Այն սկզբում բաղկացած էր Հալեպի կենտրոնում, հայկական ճամբարի մոտ կանգնեցված մի մեծ վրանից: Հետագայում փախստականների թվի մեծացմանը զուգահեռ հարկ եղավ ընդլայնել նաև նրանց ընդունման համակարգը, և 1922 թ. վերջին վարձակալվեց մի տուն, որը շրջապատվեց վրաններով: Սակայն, քանի որ վրանները տևական ապաստան չէին կարող դառնալ, և բացի այդ կարճ ժամանակից դարձյալ տարածքի ընդլայնման անհրաժեշտություն առաջացավ, Յեպեն 1923-ին քաղաքից դուրս, զովասուն այգիներում վարձակալեց մի ընդարձակ հողամաս, որի վրա հիմնվեց նոր կացարանը[15]: Այն բաղկացած էր մի մեծ փոխադրելի բարաքից, որն

13 Չնայած դրան՝ երբեմն տեղի էր ունենում նաև անհավատալին: Ինչպես վկայում էր Յեպեն, տարիներ շարունակ մահմեդական վրանում ապրած տղաները կամ աղջիկները, որոնք համոզված էին եղել, որ տվյալ ընտանիքի երեխաներն են, մի օր արթնանում էին երազից, իրենց զգում որպես հայեր և այդ պահից ձգտում դեպի իրենց ժողովուրդը: Տես նույն տեղում, էջ 22: Կամ, օրինակ՝ մի փոքրիկ աղջիկ մի հայկական ժամերգությունից այնպես էր ազդվել, որ սեփական նախաձեռնությամբ վերադարձավ հայկական համայնքի գիրկը: Մեկ ուրիշ տղայի վրա նույնօրինակ ազդեցություն էր գործել Հալեպի հայկական եկեղեցու բակի տեսարանը: Նման դեպքերը, սակայն, մեծ թիվ չէին կազմում: Տես **Jeppe K.,** Rettung aus muhammedanischer Sklaverei. Wer hilft dazu?, „Der Orient“, 1924, S. 61.

14 **Jeppe K.,** Vom Hilfswerk für die verschleppten armenischen Frauen und Kinder in Syrien und Nord-Mesopotamien, „Der Orient“, 1923, S. 22.

15 Կ. Յեպեն նոր տարածքն ընտրելիս հաշվի առավ այն հանգամանքը, որ փախստականների մեծ մասը գալու էր գյուղական վայրերից և հեշտությամբ չէր հարմարվի քաղաքային կյանքին: Տես **Jeppe K.,** Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, „Der Orient“, 1925, S. 19.

ուղարկել էր Լոնդոնի հայկական Կարմիր խաչը[16], և չորս համեմատաբար փոքր տներից, որոնք կառուցվեցին Յեպեի միջոցներով: Բացի այդ՝ փրկագնվող կանանց և Յեպեի բնակության նպատակով հողամասի մոտակայքում վարձակալվեց մեկ ուրիշ տուն, որտեղ տեղավորվեցին խոհանոցը, մառանները, լոգարանը և ճաշասենյակը[17]: Այդ ամբողջ համալիրը, որի ձեռքբերման համար ընդհանուր հաշվով ծախսվեց 26.800 մարկ, կարող էր տեղ ապահովել շուրջ 200 փախստականների համար[18] և որպես ժամանակավոր կացարան լիովին բավական էր հարաճուն պահանջները բավարարելու համար:

2. Մեծ եղեռնի ընթացքում առևանգված և բռնի կերպով մահմեդականների տներում պահվող հայ կանանց և երեխաների ազատագրումը

Հավաքագրելով մի շարք վստահելի գործակալների՝ Յեպեն 1922-ին ձեռնամուխ եղավ փրկարար աշխատանքների իրականացմանը, որոնք ծավալվեցին Դեր էս Զոր-Հասսիչէ-Մարդին ուղղությամբ[19]: Աշխատանքների արդյունավետության ապահովման ու նաև «բանտարկյալների» փախուստը դյուրացնելու նպատակով նա այդ քաղաքներում հիմնեց գաղտնի գործակալություններ և հավաքակայաններ, որտեղ նրանք կարող էին ընդունվել, կազդուրվել և ստանալով սննդամթերք ու դրամ՝ շարունակել իրենց ճանապարհը: Բացի այդ՝ մի գործակալություն ստեղծվեց նաև Զարաբլուսում, որը խիստ կարևոր վայր էր Եփրատի գետանցի առումով, և որի առաջադրանքն էր Թուրքիայից եկող հայերին օգնել անցնելու Սիրիայի տարածքը[20]:

Թուրքական քաղաքների հետ կապը հիմնականում պահպանվում էր ջորեպանների կամ որպես այդպիսին հանդես եկող գործակալների միջոցով[21], որոնք իրենց հերթին հայ «բանտարկյալների» և մասնավորապես հարեմներում գտնվող հայուհիների հետ հաղորդակցվելու համար օգտվում էին այնտեղ անարգել մուտքի իրավունք ունեցող անձանց՝ օրինակ, կույր երաժիշտների կամ լվացարարուհիների ծառայությունից[22], և ապա ձեռք բերելով համապատասխան պայմանավորվածություն՝ նրանց օգնում էին փախչել Հալեպ[23]: Իսկ ինչ վերաբերում էր հավաքակայանների կամ այլ կերպ ասած՝ մասնաճյուղերի գործունեության վերահսկողությանն ու

16 Բարաքը պարունակում էր մի մեծ դասասենյակ, մեկ սենյակ՝ ուսուցիչների, և երկու ննջարան տղաների համար, իսկ ձեղնահարկը ծառայում էր որպես աղջիկների ննջարան: Տես **Jeppe K.,** Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, „Der Orient“, 1925, S. 18.
17 Տես նույն տեղում:
18 Տես նույն տեղում:
19 Տես նույն տեղում, էջ 39:
20 Տես նույն տեղում:
21 Տես նույն տեղում:
22 **Hetzel Gertrud,** An die Pflegeeltern unserer Waisen- und „Lösegeld“kinder, „Der Orient“, 1926, S. 15.
23 «Նրանք նրանց տեղեկացնում են փախուստի հնարավորության մասին և ժամադրում մի վայրում, որտեղ նրանք նշանակված ժամին պետք է լինեն,- նշում էր Գ. Հեթցելը: -Գնալով այնտեղ՝ փախստականները ստանում են դրամ և ուտեստ և այնուհետև մեքենայով կամ երկաթուղով վտանգավոր գոտուց դուրս են բերվում և հասցվում Հալեպի փախստականների ճամբարը: ...Կանանց և աղջիկների՝ սեփական նախաձեռնությամբ փախչելը նպատակային չէր լինի: Նրանք նորից կբռնվեին և իրենց փախուստի համար ծանր պատիժներ կկրեին»: Տես նույն տեղում:

փոխադարձ կապի ապահովմանը, ապա Յեպեն դա հանձնարարեց իր որդեգիր Մ. Մելքոնյանին, որը սկզբից ևեթ դարձավ նրա «աջ ձեռքը»[24]: Հավաքակայանների հետ կապը պահպանելու, հետախուզումների և թույլ ու անառողջ հայուհիներին Հալեպ տեղափոխելու գործում անփոխարինների նշանակություն ուներ մի ամերիկուհու՝ Աննա Գիլպինի կողմից Յեպեին հատկացված ավտոմեքենան, որը հայտնի էր «Փրկարար մեքենա» կամ «Աննա-մեքենա» անվամբ[25]:

Ինչևէ, Յեպեի «քարոզչությունը անտեսանելի և աննկատ կերպով դրսում, տափաստաններում շրջում էր», և միայն 1922 թ. ամռան և աշնան ամիսներին 225 կանայք, տղաներ ու աղջիկներ, հետևելով օգնության կանչին, փախուստի դիմեցին և բարեհաջող հասան Հալեպ[26]: Նրանց ազատագրման համար ծախսվեց 2.300 ֆունտ ստեռլինգ (կամ 46000 մարկ), որից 600-ը կազմում էին նրանց ճանապարհածախսը, գործակալների և հավաքակայանների աշխատանքների համար կատարված հատկացումները, իսկ 1700 ֆունտը՝ ճանապարհին նրանց հատկացված սննդի, հագուստի, բուժօգնության և հարակից մյուս ծախսերը[27]: Յուրաքանչյուր անձի փրկության համար, այսպիսով, միջին հաշվով ծախսվում էր 6-7 ֆունտ ստեռլինգ կամ համապատասխանաբար 120-140 մարկ[28]:

Դեռ 1922 թ. առաջին ամիսներին պարզ դարձավ, որ Ազգերի լիգայի կողմից կատարվող դրամական հատկացումները չէին կարող բավարարել փրկարար աշխատանքների ծավալն ըստ հարկի ընդլայնելու համար: Ուստի Յեպեն ձգտում էր գործել հնարավորինս խնայողությամբ՝ դրա միակ ճանապարհը համարելով փախստականներին ինքնուրույն կյանքի նախապատրաստելու գործընթացի արագացումը[29]: Բարեբախտաբար շատ դեպքերում հայտնվում էին ազգականներ, որոնք, երեխաներին վերցնելով իրենց մոտ, ստանձնում էին նաև նրանց ապագայի պատասխանատվությունը: Այդ հարցում մեծ էր նաև Կ. Յեպեի երախտիքը, որն աջակցում էր փախստականների ազգականների որոնմանը և այդպիսիներին հայտնաբերելու դեպքում ապահովում կապը նրանց միջև[30]: Եթե, սակայն, ոչ ոք չէր գտնվում, ապա պատասխանատվությունը ծանրանում էր Յեպեի վրա: Միայնակ փոքրիկ երեխաներին նա տեղավորում էր որբանոցում՝ ստանձնելով նրանց խնամքը,[31] իսկ մեծահասակներն անցնում էին ուսման և դաստիարակության մի հիմնային փուլ, որից հետո կարող էին սեփական աշխատանքով գոյատևել: Այդ հարցում առանձնապես մեծ էր դանիացի բարեկամների ներդրումը, որոնք տրամադրել էին ուսուցչի աշխատավարձը, հոգ էին տարել դասագրքերի և այլ դպրոցական պի-

24 Տես **Jeppe K.,** Ein Jahr Rettungsarbeit, ebd., S. 67.
25 Տես **Jeppe K.,** Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, „Der Orient“, 1925, S. 19-20.
26 Տես **Jeppe K.,** Vom Hilfswerk für die verschleppten armenischen Frauen und Kinder in Syrien und Nord-Mesopotamien, „Der Orient“, 1923, S. 22.
27 Տես **Jeppe K.,** Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, „Der Orient“, 1925, S. 34.
28 Տես **Jeppe K.,** Rettung aus muhammedanischer Sklaverei. Wer hilft dazu?, „Der Orient“, 1924, S. 62.
29 Տես **Jeppe K.,** Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, „Der Orient“, 1925, S. 34.
30 Տես նույն տեղում, էջ 34: Յեպեն ինչպես այդ, այնպես էլ ազատագրվածների կրթության և դաստիարակության կազմակերպման ու այլ հարցերում սերտորեն համագործակցում էր նաև Ազգային առաջնորդարանի հետ: Այդ մասին մանրամասն տես **Չոլաքեան Յ.,** Քարէն Եփփե. հայ գողգոթային և վերածնունդին հետ, Հալէպ, «Արևելք», 2001, էջ 64-87:
31 Տես նույն տեղում, էջ 19: Որբանոցը հիմնվել և պահպանվում էր դանիացի բարեկամների միջոցներով: Տես նույն տեղում, էջ 35:

տույքների համար, տղաներին արհեստագործության մեջ վարժեցնելու նպատակով հիմնել էին հյուսնարան և կաշեգործարան, իսկ աղջիկների համար՝ համապատասխանաբար ասեղնագործության արհեստանոց[32]: Նշված միջոցառումների նշանակությունն ավելի պարզ դարձնելու համար արժե նշել, որ 1923 թ. սկզբին վերոնշյալ 225 անձանց շուրջ կեսը Յեպեից այլևս նյութական կախվածություն չուներ[33], իսկ 1924-ին միայն ասեղնագործական ձեռնարկությունում սեփական աշխատանքով իրենց վաստակն ապահովում էին ավելի քան 100 այրիներ և երիտասարդ աղջիկներ[34]: Ձեռագործերի մեծ մասը 1924-ից Յեպեի կողմից պարբերաբար առաքվում էր Դր. Լեփսիուսի արևելյան առաքելության գրասենյակ, որն իրականացնում էր դրանց վաճառահանումը Գերմանիայում[35]:

«Փրկարար» կացարանից ինքնուրույն կյանք մտնող՝ բոլորովին միայնակ կանանց և աղջիկների անվտանգությունն պահովելու նպատակով Յեպեն և Հալեպի հայ համայնքը միացյալ նախաձեռնությամբ հիմնեցին նաև մի վերստուգիչ գրասենյակ, որի ծախսերի մեծ մասը հատուցվում էր Յեպեի կողմից, և որը, համարվելով Ազգերի լիգայի ենթակառույցը, կարողանում էր իր հովանավորյալներին մշտապես պահել իր տեսադաշտում[36]: Խառը բնակչություն ունեցող այնպիսի քաղաքում, ինչպիսին Հալեպն էր, այդ ձեռնարկումն անշուշտ խիստ կարևոր էր, և գրասենյակի հեղինակությունը կարճ ժամանակում տարածվեց ողջ քաղաքում՝ նպաստելով նաև կանանց նախաձեռնողականության ընդլայնմանը. այն աստիճան, որ նրանք չէին խուսափում նույնիսկ այլապես մերժելի համարվող՝ սպասուհիների աշխատանքից[37]:

Ինքնուրույն կյանք մտնող փախստականների անվտանգության պահպանման և միաժամանակ նրանց բարոյալքման վտանգից զերծ պահելու առումով ոչ պակաս կարևոր էր և այն, որ կացարանն իր դռները նրանց առջև երբեք չէր փակում, և որ նրանք միշտ ունեին «Հարազատ տան» գիտակցությունը, որտեղ անհաջողության կամ կարիքի դեպքում դարձյալ կարող էին պատսպարվել: «Իհարկե, դա լրացուցիչ ծախսերի տեղիք է տալիս,- նշում էր Յեպեն իր տեղեկագրերից մեկում,- սակայն փոխարենը մեր երեխաներն ունեն անվտանգության զգացումը, որը գերագնահատել հնարավոր չէ: Նրանք կվախենային կացարանը լքել և ինչ-որ բան ձեռնարկել, եթե չիմանային, որ վերադարձի ճանապարհը միշտ բաց է: Եվ արդարև, դա հազվագյուտ է չարաշահվում: Մենք շատ զարմացած ենք, թե նրանք որքան ազնվորեն են փորձում կանգնել սեփական ոտքերի վրա»[38]:

32 Տես նույն տեղում, էջ 19:

33 Տես **Jeppe K.,** Vom Hilfswerk für die verschleppten armenischen Frauen und Kinder in Syrien und Nord-Mesopotamien, „Der Orient“, 1923, S. 23:

34 Տես **Jeppe K.,** Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, „Der Orient“, 1925, S. 20.

35 Տես Armenische Handarbeiten aus dem Orient, „Orient im Bild“, 1927, S. 8. Հմմտ. Armenische Handarbeiten aus dem Orient, ebd., S. 15. Հմմտ. Für den Salon und das gemütliche Wohnzimmer, „Orient im Bild“, 1928 S 12. Հմմտ. Armenische, reinsilberne Filigran-Schmucksachen (Handarbeit), „Orient im Bild“, 1929, S. 24. Հմմտ. Echte orientalische Knopfteppiche (Smyrnaknotten), „Orient im Bild“, 1930, S. 16 և այլն:

36 Տես **Jeppe K.,** Ein Jahr Befreiungsarbeit in Syrien, „Orient im Bild“, 1928, S. 34.

37 Տես նույն տեղում: «Մենք դա համարում ենք մի շատ ազդեցիկ ճանապարհ քրիստոնյա աղջիկներին պաշտպանելու և կարիքի մեջ գտնվողներին օգնելու համար»,- գրում էր այդ առթիվ Կ. Յեպեն: Նույն տեղում:

38 Նույն տեղում: Ամփոփելով իր տարիների ձեռբերումները՝ Յեպեն հետագայում կարող էր արձանագրել.

Ինչևէ, 1924–ին մահմեդական գերությունից ազատագրվեցին և Հալեպ տեղափոխվեցին ևս 250 մարդ[39], որոնցից 58–ը տասնչորս տարեկանից փոքր երեխաներ էին, 112–ը՝ 14–18 տարեկան տղաներ, իսկ 80–ը՝ երիտասարդ կանայք և աղջիկներ[40]:

Թե որքան հետևողականորեն էր Յեպեն զբաղվում իր պաշտպանյալների հետագա ճակատագրով, կարող են ցույց տալ հետևյալ վիճակագրական տվյալները. 1925 թ. ապրիլ ամսվա տվյալներով՝ նրանցից 130–ը գտել էին իրենց հարազատներին և տեղափոխվել նրանց մոտ, 10 երեխաներ ընդունվել էին դանիական որբանոցը, 40–ը, արհեստագործության մեջ հմտանալով, ինքնուրույն վաստակում էին իրենց ապրուստը, իսկ 70–ը դեռ գտնվում էին փախստականների կացարանում՝ Յեպեի խնամքի և հսկողության ներքո[41]:

Վերադարձողները մեծ մասամբ գտնվում էին ծանր առողջական վիճակում, ուստի մեծ ծախսեր էին կատարվում նաև նրանց ապաքինման ու կազդուրման համար: «Սարսափելի է տեսնել այն անխնամությունը, որին զոհ է դարձել այդ խեղճ ժողովուրդը,– տեղեկացնում էր Կ. Յեպեն: –Նրանց աչքերը հաճախ շատ ծանր վիճակում են: Նրանց գլուխները ծածկված են վերքերով: Նրանք մալարիա և էլի շատ ուրիշ հիվանդություններ են տարել: Դա մեր աշխատանքի համար սովորական է, և մենք մեծ առաջադրանքներ ունենք՝ կապված նրանց բուժման, հատուկ սննդի և երկարատև խնամքի հետ»[42]:

Միայն 1924–ին, օրինակ, նրանց բուժման և դեղորայքի ձեռք բերման համար ծախսվեց ավելի քան երկու հարյուր ֆունտ ստեռլինգ, որով հնարավոր եղավ առողջացնել և կազդուրել նույնիսկ անհուսալի թվացող ծանր հիվանդներին[43]:

«Մենք երբեք նրանցից որևէ մեկին չթողեցինք կարիքի մեջ: Նրանք կարողանում էին միշտ դիմել մեզ, երբ ինչ–որ բան ծուռ էր գնում...»: Նույն տեղում:

39 Տես **Jeppe K.,** Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, „Der Orient“, 1925, S. 34. 1923 թ. փրկարար աշխատանքների վերաբերյալ ստույգ տվյալներ չեն պահպանվել, սակայն նախորդ տարվա և հաջորդ երկու տարիների տվյալների համեմատական քննությունը վկայում է, որ 1923–ին ազատագրվածների թիվը հասնում էր մոտ 200–ի: Տես նույն տեղում: Հմմտ. **Jeppe K.,** Vom Hilfswerk für die verschleppten armenischen Frauen und Kinder in Syrien und Nord–Mesopotamien, „Der Orient“, 1923, S. 22. Հմմտ. **Jeppe K.,** Ein Jahr Rettungsarbeit, „Der Orient“, 1926, S. 67, 70.

40 Տես **Jeppe K.,** Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, „Der Orient“, 1925, S. 35. Ուշագրավ է, որ վերոնշյալ 58 երեխաներից 48–ը 12–14 տարեկան էին, և միայն 10–ն էին 12 տարեկանից ավելի փոքր: Տես նույն տեղում, էջ 37: Նման երեխաներին հայտնաբերելը չափազանց դժվար էր, քանի որ, ինչպես արդեն նշվել է, վաղ մանկական տարիքից մեծանալով մահմեդական ընտանիքներում՝ նրանք ձուլվել էին մահմեդական միջավայրին և իրենց ազգային պատկանելության մասին պատկերացում չունեին: «Միայն մեծագույն պատահականության միջոցով են նման երեխաները վերագտնվում,– նշում էր այդ առթիվ Յեպեն: –Հիմնականում նրանց պետք է համարել կորած...»: Տես նույն տեղում, էջ 38:

41 Տես նույն տեղում, էջ 35:

42 Տես նույն տեղում, էջ 38: «Մենք կարող ենք խնամել խեղճ արարածներին, և ինչ մեծ ուրախություն է, երբ նրանք կազդուրվում են,– գրված էր մեկ այլ տեղեկագրում: –Այդ թշվառները կարիք ունեն բժշկական սպասարկման և խնամքի: Եվ առհասարակ ինչպիսի՜ վիճակում է եկողների մեծ մասը: Մի երիտասարդ Եղիայի մասին մենք լսում ենք. «Նա իր կյանքում դեռ ոչ մի անգամ չի լողացել: Դուք պետք է նրան տեսնեիք, երբ նա այստեղ գալուց հետո բաղնիք մտավ: Նրա փոքրիկ դեմքը ճառագում էր, և նա ասաց. «Ինչ հրաշալի է այստեղ, ինչպես երազում: Մի կին ինձ լվանում է, իսկ մեկ ուրիշը ջուր է լցնում ինձ վրա»: Տես **Hetzel G.,** An die Pflegeeltern unserer Waisen– und „Lösegeld“kinder, „Der Orient“, 1926, S. 15. «Նա մի թշվառ արարած է՝ այրված կրծքով, քանի որ արաբների կանայք նրան (նա արաբների մոտ հովիվ էր) հին այրող ցնցոտիներ են հագցրել,–պատմում էր մեկ ուրիշ տեղեկագիր: –Այո՛, ինչպես են տեղ հասնում փրկվածները. ամբողջովին կեղտոտ և մակաբույծ միջատների մեջ, ցնցոտիներով և սովահար: Ստրկության մեջ ավելի հարվածներ են եղել, քան հաց»: Նույն տեղում:

43 Տես **Jeppe K.,** Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, „Der Orient“, 1925, S. 38. Հաստատության բժշկին մեծ աջակցություն էր ցուցաբերում մի հայ բժիշկ՝ Սիրիայում «Բժիշկների մեծ լույս» մականունը

Յեպեի և նրա գործակալների քարոզչությունն արդեն 1924-ին այն աստիճան լայն տարածում էր ստացել, որ փախուստի փորձեր էին կատարվում նույնիսկ Դիարբեքիրից և Թուրքիայի այլ հեռավոր քաղաքներից[44]: Իհարկե, այս դեպքում խոսքը վերաբերում էր միայն երիտասարդ տղաներին, որոնք ի վիճակի էին դիմագրավել հեռավոր ճանապարհների զրկանքներին և հաղթահարել վտանգները: Նման օրինակները, սակայն, միաժամանակ վկայում էին, թե նշված և մյուս հեռավոր շրջաններում որքան մեծ պետք է լիներ նաև այն դժբախտների թվաքանակը, ովքեր ազատության էին ձգտում, սակայն առանց օգնության չէին կարող փախուստի դիմել: Յեպեն նրանց կարող էր ձեռք մեկնել միայն իր մասնաճյուղերի թվի մեծացման դեպքում, ինչը Ազգերի լիգայից հատկացվող՝ խիստ սահմանափակ միջոցներով հնարավոր չէր իրագործել և մշտապես մնում էր նրա հիմնական մտահոգության առարկան[45]: «Մի՞թե քաղաքակիրթ աշխարհի համար խայտառակություն չէ, որ այդ կանայք և երեխաները չկարողանան փրկվել միայն դրամի բացակայության պատճառով,- նշում էր նա իր նամակներից մեկում: -Մենք այդ անլուր հանցագործության համար քիչ թե շատ համապատասխանատու ենք կամ առնվազն այդպիսին կդառնանք, եթե այդ խնդիրը չլուծենք, և Ազգերի լիգայի ջանքերը (որը նույնպես դրա համար միջոցներ չունի և հույսը դրել է քրիստոնեական բարեգործության վրա) վիժեցվեն»[46]:

Հատկանշական է, որ Յեպեի այս մեծ նվիրումը պայմանավորված էր ոչ միայն մարդասիրական նկատառումներով, այլև այն մեծ մշակույթի փրկության մղումով, որի կրողն էր հայ ժողովուրդը: Եվ պատահական չէ, որ նա իր տեղեկագրերում շարունակ փորձում էր դա ըմբռնելի դարձնել նաև քաղաքակիրթ աշխարհին: «Մեր մեջ դեռ կան ընդարձակ շերտեր, որոնք պատրաստ են մեր հոգևոր արժեքների պահպանման համար մեծ զոհողություններ կատարել,- գրում էր նա,- Իսկ այդ դեպքում պետք է նաև մեր մեջ ինքնապահպանման բնազդն արթնանա: Չէ՞ որ մեր ռասայի, մեր եկեղեցու, մեր մշակույթի մի հատվածն է, որ այստեղ Ասիայի կողմից պարզապես ոչնչացվում է: Առաջադրանքի բնույթը կհասնի՞ արդյոք Եվրոպայի գիտակցությանը, այդ դեպքում նա այն կհամարի իրենը»[47]:

1925-ին Յեպեին մասնակիորեն հաջողվեց իր մտադրությունն իրականացնել, և բեդվինաբնակ բնակավայրերի կենտրոնում՝ Ռաս-ուլ-Այնում հիմնվեց թվով 6-րդ հավաքակայանը[48]: Ընտրությունը պատահական չէր, քանի որ 1916-ին այդ քաղաքում և շրջակայքում սպանդի էին ենթարկվել աքսորը վերապրած 24.000 հայեր, իսկ հազարավոր հայ երեխաներ վա-

ստացած՝ դր. Ալթունյանը: Նա իր՝ նույնպես բժիշկ, Անգլիայում ուսանած որդու հետ միասին Հալեպում հիմնել էր նորագույն սարքավորումներով հագեցած մի ժամանակակից հիվանդանոց, որը Սիրիայում իր նմանակը չուներ, և որն ի դեպ, հանձն էր առել «ազատագրված» հայերի արյան հետազոտությունը կատարել անվճար: Հիվանդանոցում իրականացվում էին բազմաբնույթ հետազոտություններ և բարդ վիրահատություններ, որոնց շնորհիվ կյանք վերադարձան Յեպեի՝ նույնիսկ ամենածանր հիվանդները: Նույն տեղում:

44 Տես նույն տեղում, էջ 36:

45 «Եթե մեր բյուջեն մեզ թույլ տար շատ մասնաճյուղեր հիմնել,- նշում էր նա իր՝ 1924-ի հաշվետվության մեջ, -և դրանք ըստ հարկի դրամով ապահովել, ապա մենք կարող էինք շատերին ազատել»: Նույն տեղում:

46 **Jeppe K.,** Rettung aus muhammedanischer Sklaverei. Wer hilft dazu?, „Der Orient“, 1924, S. 63.

47 **Jeppe K.,** Vom Hilfswerk für die verschleppten armenischen Frauen und Kinder in Syrien und Nord-Mesopotamien, „Der Orient“, 1923, S. 22.

48 Տես **Jeppe K.,** Ein Jahr Rettungsarbeit, „Der Orient“, 1926, S. 67.

ճառվել էին արաբներին ու թուրքերին[49]: Եթե նույնիսկ վերջիններիս մեծ մասը հետագայում տարվել էր երկրի այլ հատվածներ, ապա Յեպեի հաշվարկներով քաղաքի շրջակայքում դեռ պետք է մնացած լինեին մոտ երկու հազար երեխաներ[50], որոնց փրկությունը պետք է դառնար նորաբաց մասնաձյուղի հիմնական առաջադրանքը: Բացի այդ՝ Ռաս-ուլ-Այնը գտնվում էր ֆրանսիական ջոկատների վերահսկողության ներքո և երկաթուղային կապ ուներ Հալեպի հետ, ինչն իհարկե կարևոր նախադրյալ էր արդյունավետ գործունեություն ծավալելու համար: Յեպեն իր կանխատեսումներում չէր սխալվել, և նոր մասնաձյուղը մեծ դեր ունեցավ հետագա փրկարար աշխատանքներում:

1925-ին ազատագրվեցին և Հալեպ տեղափոխվեցին ևս 300 հոգի, որոնց 30 տոկոսը կանայք և աղջիկներ էին, 30 տոկոսը՝ 15 տարեկանից փոքր երեխաներ, իսկ մյուսները՝ նշված տարիքը գերազանցող տղաներ[51]: Նրանց փրկությունն իրականացնելու համար ծախսվեց 2.700 ֆունտ ստեռլինգ կամ յուրաքանչյուրի համար միջին հաշվով 9 ֆունտ ստեռլինգ[52]: Հատկանշական է, որ մինչև տարեվերջ նրանցից 200-ը Յեպեի աջակցությամբ կարողացան գտնել իրենց ազգականներին և տեղափոխվել նրանց մոտ, 30-ը դարձան միանգամայն ինքնուրույն, և 1926 թ. սկզբին կացարանում բնակվում էին միայն 80 փախստականներ[53]:

Այսպիսով, փրկարար աշխատանքների առաջին չորս տարիների ընթացքում մահմեդական լծից ազատագրվեցին և իրենց ժողովրդի գիրկը վերադարձան ընդհանուր թվով 1.100 հայեր, որոնցից 950-ի փրկությունն իրականացվել էր Յեպեին հատկացված նյութական միջոցներով, իսկ 150 հոգու ծախսերը հոգացել էին նրանց հարազատները[54]: Այդ ամենը հնարավոր դարձավ Յեպեի մեծ նվիրումի, նրա հովանավորների նյութական աջակցության (Ազգերի լիգայից հետո, ինչպես շուտով կտեսնենք, մեծագույն ներդրումն ունեցավ Յոհ. Լեփսիուսի ընկերությունը) և իհարկե նաև նրա հայ գործակալների անձնվեր աշխատանքի շնորհիվ, որը, ցավոք, զերծ չէր նաև կորուստներից. 1925 թ. նոյեմբերին վախճանվեց Յեպեի ամենաերախտաշատ գործակալներից մեկը՝ Գրիգոր աղան, որը գործում էր Դեր էս Զորի շրջանում[55]: Տարեվերջին վրեժխնդրությամբ համակված արաբների կողմից սպանվեց նաև «Հասիչիեի հերոս»-ը՝ Վասիլ Սաբաղը[56]: Նրանց փոխարինեցին նորերը[57]:

Փոփոխություններ կատարվեցին նաև մասնաձյուղերում. 1925-ին շեյխ

49 Տես Karen Jeppes Arbeit, ebd., S. 5.
50 Տես նույն տեղում:
51 Տես **Jeppe K.,** Ein Jahr Rettungsarbeit, ebd., S. 69.
52 Տես նույն տեղում, էջ 67: 9 ֆունտ ստեռլինգը համարժեք էր 180 գերմանական մարկին: Տես նույն տեղում:
53 Տես նույն տեղում, էջ 69:
54 Տես նույն տեղում, էջ 70: Չնայած այդ 150 հոգու ազատագրումը կատարվել էր Յեպեի գործակալությունների միջոցով, սակայն դրա համար անհրաժեշտ դրամը տրամադրել էին նրանց հարազատները՝ միաժամանակ ստանձնելով նրանց հետագա ապրուստի և օթևանի ծախսերը: Այդ է պատճառը, որ Յեպեն նրանց անուններն իր ցուցակներում չի ընդգրկել և տեղեկություններ չի հաղորդել նաև իր հաշվետվություններում: Հայտնի է միայն, որ չորս տարիների ընթացքում այդ եղանակով ազատագրվել է 150 հոգի, այսինքն, տարեկան միջին հաշվով 38 մարդ: Այդ տվյալները ներառված չեն նաև մեր վերոնշյալ ամենամյա վիճակագրական տեղեկություններում:
55 Տես Karen Jeppes Arbeit, „Der Orient“, 1926, S. 3:
56 Տես նույն տեղում, էջ 3-4:
57 Դա բնականաբար պայմանավորված էր նրանց անձը չվտանգելու դրդումով:

Սաիդի քրդական ապստամբության հետևանքով թուրքական սահմանն արգելափակվեց, և Ջարաբլուսի մասնաճյուղի գործունեությունը, որի նպատակն էր օգնության ձեռք մեկնել Թուրքիայից եկող փախստական-ներին, տարեվերջին փաստացիորեն հասավ իր ավարտին[58]: Լուծարվեց նաև Դեր էս Զորի մասնաճյուղը, քանի որ աշխատանքն այդ շրջանում համարվում էր ավարտված, և, ինչպես Յեպեն էր իր տեղեկագրերում նշում, այն արդեն «մաքուր» էր: Չնայած դրան՝ Գրիգոր աղայի այրին շա-րունակում էր մնալ այդ շրջանում որպես իր ամուսնու փոխանորդն ու Յեպեի նոր գործակալը՝ այլ վայրերից Դեր էս Զոր եկող հայերին օգնելով շարունակել ճանապարհը դեպի Հալեպ[59]: Նշված մասնաճյուղերի լուծա-րումը Յեպեին հնարավորություն տվեց մեծացնել մյուս մասնաճյուղերին կատարվող նյութական հատկացումները՝ ըստ հնարավորին ընդլայնելով նրանց գործունեությունը:

Մ. Մելքոնյանից բացի փրկարար աշխատանքներում Յեպեին մեծ աջակցություն էր ցուցաբերում նաև Լեոպոլդ Գազչուկը, որը, 1923 թ. մարտից դառնալով նրա անձնական քարտուղարը, ղեկավարում էր նաև քաղաքի աղքատներին և հիվանդներին ցուցաբերվող օգնության աշխա-տանքները[60]: Բացի այդ՝ 1925-ին դանիացի բարեկամների կողմից Հալեպ ուղարկվեց մի նոր օգնական ևս՝ օր. Յենի Յենսենը, որն այնտեղ ստանձ-նեց դպրոցի, ձեռնարկությունների և հիվանդանոցի վերահսկողությունը՝ Յեպեին հնարավորություն ընձեռելով ամբողջովին նվիրվել փրկարար աշխատանքներին[61]:

Ազատագրվող երեխաների մեծ մասը բնականաբար աքսորի ժամա-նակ եղել էին փոքրիկ՝ մոտավորապես 5-6 տարեկան, ուստի փախուստի որոշում էին ընդունում ավելի բնազդի, քան հիշողության դրդումով: «Նրանց նախկին կյանքի հիշողությունը նրանց մեջ պահպանվում էր ինչպես մութ նախազգացում կամ կիսամոռացված երազ,- նշում էր այդ առթիվ Կ. Յեպեն: -Նրանք հազիվ թե ի վիճակի էին հասկանալ այն մղումը, որ նրանց դրսում հանգիստ չէր տալիս և ի վերջո, մեծ մասամբ մեր գործակալների օգնությամբ դարձյալ տուն էր բերում»[62]:

Չնայած այդպիսիները հայտնաբերվելուց հետո որոշ ժամանակ փոր-ձում էին համառորեն իրենց համարել մահմեդականներ, սակայն նրանցից շատերի դեպքում դա թյուրըմբռնման արդյունք չէր, և ինչպես Յեպեն էր նշում, նրանց ծագման ուրացումը մեծ մասամբ պայմանավորված էր երկ-յուղով, քանի որ «նրանց ներշնչել էին, որ նրանք կսպանվեն, եթե իրենց ազգությունը խոստովանեն, քանի որ նրանցից շատերը տեսել էին, թե իրենց հարազատներն ինչպես են սպանվել, այնպես որ պետք է հավա-տային, որ նույն ճակատագիրը սպասում էր նաև իրենց»[63]:

---

58 Տես նույն տեղում, էջ 5: Չնայած դրան, Յեպեն Ջարաբլուսին մոտակա Բումբուս բնակավայրում շարու-նակում էր մի գործակալ պահել, որի խնդիրն էր հետազոտել Եփրատի այդ հատվածում, Հալեպից հյուսիս և արևելք ընկած շրջանը և հայերի հայտնաբերելու դեպքում օգնել նրանց դիմելու փախուստի: Տես **Jeppe K.,** Ein Jahr Rettungsarbeit, ebd., S. 67.

59 Տես նույն տեղում:

60 Տես Der Geburtstag, „Orient im Bild", 1929, S. 46.

61 Տես Karen Jeppes Arbeit, „Der Orient", 1926, S. 5-6.

62 Տես Karen Jeppes neuester Bericht, „Orient im Bild", 1927, S. 65.

63 **Jeppe K.,** Rettung aus muhammedanischer Sklaverei. Wer hilft dazu?, „Der Orient", 1924, S. 61.

Այդ երեխաների հոգում երկյուղը փարատելն ու փախուստի վճռականություն ներշնչելը մեծ դժվարություն չէր ներկայացնում, և ինչպես 1924-ին տեղեկացնում էր Յեպեն, փախստական հայերի մոտ կեսը պատկանում էր այդ խմբին: Իհարկե, կային և այնպիսիները, որոնք արդեն համոզմունքով դարձել էին մահմեդական և վայրի ֆանատիզմով էին վերաբերվում այդ հարցին: Սակայն այդ դեպքերից նույնպես քչերն էին անհույս, և այն տղաներն ու աղջիկները, որոնք 12 կամ 13 տարեկանում «համոզված» մահմեդականներ էին, հաշվված ամիսների կամ առավելագույնը 1-2 տարվա ընթացքում գալիս էին ճշմարիտ ըմբռնման՝ գիտակցելով իրենց ազգային ու կրոնական պատկանելությունը[64]: Դա բնականաբար ինքնին տեղի ունենալ չէր կարող և հնարավոր էր դառնում միայն Յեպեի կողմից կացարանում կազմակերպված հետևողական «հոգևոր կրթության» միջոցով[65]: «Տուն գալը նրանց համար համանշանակ չէ «իրենց տանը զգալուն»,- գրում էր այդ մասին Յեպեն:- Ոչ միայն նրանց մայրենի լեզուն է գրեթե ամբողջովին մոռացվել և պետք է նորից ուսուցանվի, այլև պետք է սկսեն միանգամայն այլ կերպ ապրել: Նրանք գալիս են մի միջավայրից, որտեղ, օրինակ, արյուն թափելը դեռ համարվում է սուրբ պարտականություն, և որտեղ նրանց հիմնականում մահմեդական մտածելակերպն է դրոշմվել...»[66] :

Այդ «հոգևոր կրթության» հենքը, անշուշտ, կազմում էր լեզվի ուսուցումը, սակայն ուշագրավ է, որ ավելի ներգործուն, քան խոսքը, հայ ժողովրդական երգը և երաժշտությունն էին, որոնց ունկնդրումը, ինչպես վկայում էր Յեպեն, մեծագույն ազդեցությունն էր գործում ազգային արմատներից խլված հայորդիների վրա: «Չնայած բառերը մոռացվել են և հաճախ դանդաղ են գիտակցության մեջ վերականգնվում,- ընդգծում էր նա,- սակայն հին մեղեդիները և ծանոթ հնչյունները, որ նրանց հանդիպում են կացարանում և եկեղեցում, ողջունում են նրանց՝ որպես հին ծանոթներ, և ամենաազդու ներգործությունն ունենում նրանց մեջ նախնական բնազդներն արթնացնելու համար: «Հայը արթնանում է»,- ինչպես մենք ենք այդ անվանում: Դա նկատվում է նույնիսկ նրանց դեմքի արտահայտությունից...»[67]:

Երեխաները ստանում էին նաև ընդգծված քրիստոնեական դաստիարակություն՝ ծանոթանալով Հիսուսի անձին, գործունեությանն ու պատվիրաններին: Վերջինիս հետ նրանց «մերձեցումն» ավելի առարկայական և անմիջական դարձնելու համար կացարանի ընդհանուր հավաքույթների սրահը զարդարված էր Հիսուսի անձը պատկերող և աստվածաշնչյան մոտիվներով պատրաստված այլ նկարներով, որոնք, ինչպես վկայում էր Յեպեն, մեծ ազդեցություն էին գործում մահմեդական մտաբնկալումներից նրանց ձերբազատելու համար: «Երբեմն նրանք փորձում են համբուրել

64 Տես նույն տեղում, էջ 61-62:

65 «Հերքել չենք կարող, որ մեզ համար մի փոքր դժվար է ազատագրվածներին երկար մեզ մոտ պահել,- տեղեկացնում էր Յեպեն,- սակայն մյուս կողմից ուրախ ենք, որ նրանք շատ շուտ չեն հեռանում: Մենք դրանով ավելի մեծ հնարավորություն ունենք հոգալու նրանց հոգևոր կրթությունը: Քանի որ շատ բաներից զուրկ են եղել, ինչը նորից պետք է վերադարձվի, և վատ մոլախոտը պետք է քաղհանվի: Տես Karen Jeppes neuester Bericht, „Orient im Bild", 1927, S. 65.

66 Նույն տեղում:

67 Նույն տեղում:

նկարները,– նշում էր Յեպեն:– Դրանք շատ բարձր են կախված, այլապես ոչինչ այժմ մնացած չէր լինի: Երբ, սակայն, մեկն այդ նպատակով վեր է մագլցում, մենք նրան թույլ ենք տալիս դա անել: Այդ գործողությունը նրա հոգու երախտագիտության ճշմարիտ արտահայտություն է: Նա սկզբում պետք է միայն Հիսուսին պաշտի, իսկ ավելի ուշ նաև կիմանա, որ ճշմարիտ ազատությունը ներքին ազատությունն է: Անշուշտ, մինչև այս 12 տարվա ընթացքում վայրենացած տղաներից ու աղջիկներից դարձյալ լիարժեք մարդիկ դուրս կգան, կպահանջվի երկար ժամանակ, համբերություն և մեծ սեր: Սակայն դա օրինյալ աշխատանք է...»[68]:

Եթե նկատի առնենք, որ հայերեն ասված յուրաքանչյուր խոսք բոլորին հասկանալի դառնալու համար պետք է թարգմանվեր արաբերեն, քրդերեն կամ թուրքերեն, քանի որ երեխաները մեծ մասամբ հասկանում էին այդ լեզուներից միայն մեկը[69], ապա պարզ կլինի, թե նրանց կրթումն ու դաստիարակությունը հատկապես առաջին ամիսներին որքան դժվարություններ պետք է հաղթահարեր: Եվ այնուամենայնիվ դրանք հաղթահարվում էին, և կացարան մտնող յուրաքանչյուր հայորդի այնտեղից հեռանում էր միանգամայն պատրաստ նոր՝ ինքնուրույն կյանք մտնելու համար:

Ինչևէ, Յեպեն իր հայափրկիչ գործունեությունը միայն լիգայի կողմից հատկացված գումարներով չէր կարող իրականացնել: Նրան օգնության ձեռք էին մեկնել նաև բազմաթիվ այլ կազմակերպություններ և անհատներ, ինչպես օրինակ, Լոնդոնի հայ կանանց միությունը, Լորդ Մայորի ֆոնդը, Լոնդոնի Bible Lands Missions Aid Society ընկերությունը, Imperial Mar Relief Fund կազմակերպությունը, շվեյցարական օգնության միությունները և այլն[70]: Այն ընկերությունը, սակայն, որը 1924-ից մեծագույն նյութական ներդրումն ունեցավ այդ աշխատանքներում, Դր. Լեփսիուսի Արևելյան առաքելությունն էր: Նոր առաջադրանքների իրագործման համար միջոցներ ձեռք բերելու նպատակով այն գործի դրեց իր բոլոր հնարավորությունները: Կանոնավոր կերպով լույս էին տեսնում Յեպեի և Կյունցլերի տեղեկագրերը: Պատրաստվում և առաքվում էին մեծաքանակ թռուցիկներ, որոնցից շատերը վերահրատարակվում էին նաև «Der Orient»-ում: «Ո՞վ ամսական մեկ մարկ կտա մահմեդական ստրկությունից մի քրիստոնյա աղջկա կամ տղայի փրկության համար,– նշված էր, օրինակ, կազմակերպության «Փրկագին» վերնագիրը կրող թիվ 30 թռուցիկում: –Հազարավոր մարդիկ սպասում են իրենց ազատագրմանը: Ջնդանի դռները բաց են: Փրկարար աշխատանքը կազմակերպված է: Պակասում է միայն փողը...»[71]:

Լեփսիուսը բավականաչափ նյութական միջոցների հայթայթման համար գործի էր դրել իր՝ տաղանդավոր հրապարակախոսի, ողջ ավյունն ու եռանդը՝ ձգտելով բորբոքել թե՛ մարդասիրական և թե՛ կրոնական նախանձախնդրությունները[72]: Հակադրվելով մահմեդական շրջաններում

68 Նույն տեղում:
69 Տես նույն տեղում:
70 Տես Karen Jeppes Arbeit, ebd., S. 5.
71 **Jeppe K.,** Rettung aus muhammedanischer Sklaverei, „Der Orient“, 1924, S. 59.
72 «Աբդուլ Համիդի ժամանակ մենք հազարավոր այրիների և որբերի ենք կենդանի պահել և օգնել, որ մի նոր սերունդ մեծանա,– գրում էր նա 1925-ի՝ բարեկամներին ուղղված իր ուղերձներից մեկում: –Այժմ թշվառությունը տասն անգամ ավելի մեծ է, քան այն ժամանակ: Պետք է մենք այդ հարցում մի կողմ

քրիստոնեական քարոզչության վերականգնման՝ գերմանական ավետարանական եկեղեցում ավանդաբար գոյատևող ձգտումներին՝ Լեփսիուսը դրանք համարում էր ժամանակավրեպ և անիմաստ, այն դեպքում, երբ հնարավորություն էր առարկայացել փրկել տասնյակ հազարավոր քրիստոնյա կանանց, աղջիկների և երեխաների, որոնք դատապարտված էին մահմեդականացման: Այդ առաջադրանքը նա համարում էր մի յուրօրինակ քննություն, որի միջոցով գերմանացի քրիստոնյաները պարտավոր էին ապացուցել իրենց խոսքի և գործի համապատասխանությունը: «Այստեղ ոչ միայն հնարավորություն է առարկայանում հայ ժողովրդի հազարավոր զավակների պահպանել, այլև իսլամի դաշտից հարուստ բերք հավաքել, որն այլապես ոչնչանում է,– գրում էր նա 1924–ին հրատարակված իր՝ «Փրկագին» վերնագիրը կրող կոչում: –Այստեղ կարող է պարզվել, թե արդյոք մեր միսիոներական սերը կարո՞ղ է ավելին անել, քան բարեպաշտ խոսքերն են, արդյոք այն իսլամի դեմ պայքարում կարո՞ղ է քրիստոնեական հավատի գործեր ի հայտ բերել: Յուրաքանչյուր ավետարանական համայնք պետք է հավաքի նվազագույնը 6–7 ֆունտ կամ 120–140 մարկ մի քրիստոնյա տղայի կամ աղջկա թուրքական և քրդական հարեմներից ու վրաններից ազատագրելու և իսլամի լծից փրկելու համար: Ես խնդրում եմ բոլորին, ովքեր ինձ հետ միասին ամոթի և խայտառակության զգացումով կհամակվեն, նվիրվել այդ առաջադրանքի կատարմանը և մեզ ըստ հնարավորին շուտ առդիր անդորրագրերի միջոցով գումար տրամադրել մահմեդական ստրկությունից մի քրիստոնյա երեխայի փրկության համար: ...Թո՛ղ Աստծո օգնությունն ուղեկցի մեր կոչին»[73]:

Լայն ծավալում ստացան նաև շրջիկ զեկուցումները: Միաժամանակ այն հոգևորականներին, ովքեր ցանկություն էին հայտնում իրենց համայնքներում փրկարար աշխատանքների վերաբերյալ զեկուցումներ կարդալ, տրամադրվում էին լուսանկարներ, տեսաժապավեններ և այլ ցուցադրական ու տեղեկատվական նյութեր[74]: 1925 թ. սկզբին այդ նպատակով արդեն բազմացվել և շրջանառության մեջ էր դրվել լուսանկարների մի ստվար շարք, որը կրում էր «Մի քրիստոնյա ժողովրդի կործանումը» անվանումը և ներկայացնում էր արևմտահայության աքսորի վերջին շրջանի ողբերգությունները[75]: «Der Orient»–ում հրատարակվելուց հետո պարբերաբար մեծ թվաքանակով բազմացվում և հասարակական շրջաններին էին առաքվում նաև Յեպեի և Կյունցլերի տեղեկագրերը: Միաժամանակ Պոտսդամի Տեմպել հրատարակչությունում կազմակերպության միջոցներով հրատարակվում էին հայ ժողովրդի պատմությանը և ցեղասպանությանը նվիրված զանազան մենագրություններ և այլ աշխատություններ, որոնք հայտերի ներկայացման դեպքում առաքվում էին բոլոր ցանկացողներին:

կանգնենք և մյուս ժողովուրդներին թողնենք մեծ բարեգործությունը կատարել: Ո՛չ, նաև մեր մասին պետք է ասվի, որ նրանք արել են, ինչ կարողացել են...»: **Lepsius J.**, 1925, „Der Orient“, 1925, S. 2.

73 **Lepsius J.,** „Lösegeld“, 1924, S. 64. Մեկ հայի ազատագրման ծախսը, կամ այլ կերպ ասած՝ մեկ փրկագինը 1924–1925 թթ. կազմում էր 120–140 մարկ, իսկ 1926–ից՝ միջին հաշվով 180 մարկ: Նույն տեղում: Տես նաև: Հմմտ. **Jeppe K.,** Rettung aus muhammedanischer Sklaverei. Wer hilft dazu?, „Der Orient“, 1924, S. 62. Հմմտ. **Jeppe K.,** Ein Jahr Rettungsarbeit, „Der Orient“, 1926, S. 67.

74 Տես Waisenkinder, „Der Orient“, 1925, S. 13. Տես նաև **Schäfer R.**, Mitteilungen, „Der Orient“, 1925, S. 46.

75 Տես նույն տեղում:

Իր հայանվեր քարոզչությունը միաժամանակ դպրոցներում և կիրակնօրյա կրթարաններում տարածելու նպատակով Լեփսիուսը 1925-ին հիմնեց նաև մի ամենամյա մանկական պատկերազարդ պարբերական, որը կոչվում էր «Für unsere kleinen Armenierfreunde» («Հայերի՝ մեր փոքրիկ բարեկամների համար») և պարունակում էր հետաքրքիր պատմություններ փախստական երեխաների և որբերի վերաբերյալ[76]:

Այդ բոլոր ջանքերն ինչպես հարկն է՝ արդյունավորվեցին, և Դր. Լեփսիուսի արևելյան առաքելությունը դեռ 1924-ին կարողացավ ձեռնամուխ լինել իր հանձնառությունների կատարմանը: Միայն 1924 թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին ընկերությունը Հալեպի՝ փրկագնման աշխատանքներին կարողացավ տրամադրել 4.200[77], իսկ 1925-ի ընթացքում՝ 24.300 մարկ[78]: Ուղարկված գումարները Ցեպեի կողմից անմիջապես ծառայեցվում էին իրենց նպատակին: Դրանցով 1924 թ. վերջին ազատագրվեցին և Հալեպի «Փրկարար կացարանը» տեղափոխվեցին 31, իսկ 1925-ի ընթացքում՝ 223 հայ պատանիներ, կանայք և աղջիկներ[79]:

1926-ին Կ. Ցեպեի և նրա գործակալությունների ուժերով մահմեդական ստրկությունից ազատագրվեցին 325, իսկ 1927-ին ևս 275, այսինքն երկու տարիների հանրագումարային թվով՝ շուրջ 600 հայեր, որոնցից 297-ը՝ բացառապես Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի նյութական միջոցներով[80]: Այսպիսով մինչև 1927 թ. դեկտեմբերի 31-ը Ցեպեի և նրա գործակալների կողմից ազատագրված հայերի ընդհանուր թվաքանակը հասավ 1700-ի, որոնցից 551-ի «փրկագինը» հատկացվել էր Լեփսիուսի կազմակերպության կողմից[81]: Նրանց ազատագրման ընդհանուր ծախսերը համապատասխանաբար կազմեցին 27.201,45 թուրքական ֆունտ, որից 9.926,25 ֆունտը հատկացրել էր Ազգերի լիգան, իսկ մնացյալը՝ Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն և հայ ժողովրդի մյուս բարեկամները[82], և բացի այդ ևս 24.270 թուրքական ֆունտ կամ շուրջ 440.000 մարկ տրամադրվեց փրկագնվածների սկզբնական խնամքի, կրթության և դաստիարակության նպատակներին[83]: Ինչ վերաբերում էր նրանց հետագա ճակատագրին, ապա 1927 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ նրանցից 110-ը դեռ գտնվում էին Ցեպեի հովանա-

---

76Կազմակերպությունը զուգահեռաբար զբաղվում էր նաև Հալեպի հայ կանանց ու աղջիկների կողմից պատրաստված բարձրարվեստ ձեռագործերի վաճառքով, որոնք պարբերաբար Պոտսդամ էին առաքվում Ցեպեի կողմից: Այդ ասեղնագործությունները, որոնց տեսականին խիստ բազմազան էր (սփռոցներ, թաշկինակներ, ժանյակներ, օձիքներ, շրջակարեր և այլն), Լեփսիուսի և իր աշխատակիցների հետևողական քարոզչության և գովազդների շնորհիվ Գերմանիայում արագորեն սպառվում էին՝ լրացուցիչ նյութական ներդրում բերելով օգնության աշխատանքներին:

77 Տես **Jeppe K.,** Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, „Der Orient“, 1925, S. 17.

78 Տես Karen Jeppes Arbeit, „Der Orient“, 1926, S. 5.

79 Տես Jahresrechnung von Dr. Lepsius Orient-Mission (Armenisches Hilfswerk) für das Jahr 1924, „Der Orient“, 1925, S. 31. Տես նաև **Schäfer R.**, Zur Jahresrechnung, „Der Orient“, 1926, S. 95.

80 Տես **Jeppe K.,** Ein Jahr Befreiungsarbeit in Syrien, „Orient im Bild“, 1928, S. 33.

81 Տես **Schäfer R.**, Zur umstehenden Jahresrechnung 1926, „Der Orient“, 1927, S. 31. Հմմտ. **Schütz Paul,** Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission 1927, „Orient im Bild“, 1928, S. 19. Այդ 1700 փրկագնվածներից «փրկարար կացարանում» հանգրվանել և ըստ այդմ Ցեպեի՝ խնամքի և վերահսկողության հաշվեցուցակներում ընդգրկվել էին 1484-ը: Նրանցից 430-ը 15 տարեկանից փոքր երեխաներ էին, 463-ը՝ այդ տարիքից մեծ կանայք և աղջիկներ, իսկ 591-ը՝ այդ տարիքից մեծ տղաներ: Տես **Jeppe K.,** Ein Jahr Befreiungsarbeit in Syrien, ebd., S. 33.

82 Տես նույն տեղում, էջ 27: 201,45 թուրքական ֆունտը կազմում էր մոտավորապես 497.786,535 գերմանական մարկ կամ 30.003,199 անգլիական ֆունտ ստեռլինգ: Այդ տարադրամների արժեքային հարաբերակցությունը, տես նույն տեղում:

83 Տես նույն տեղում:

վորության և խնամքի ներքո[84], 1.134-ը գտել էին իրենց հարազատներին և տեղափոխվել նրանց մոտ, 342-ը դարձել էին միանգամայն ինքնուրույն և ապրում էին սեփական վաստակով, 66-ը փոխադրվել էին որբանոցներ կամ այլ բարեխնամ հաստատություններ, 10-ը մահացել էին, իսկ 38-ը անհետացել[85]: Վերջիններիս մեծ մասը պատկանում էին այն երիտասարդների թվին, որոնք իրենց՝ դեռ գերության մեջ գտնվող արյունակիցներին ևս Հալեպ փոխադրելու նպատակով ետ էին վերադառնում, և եթե շատերին հաջողվում էր այդ անել, ապա ոմանք, ովքեր չէին վերադարձել, ամենայն հավանականությամբ, բացահայտվելով՝ սպանվել էին մահմեդականների կողմից[86]: Իսկ ինչ վերաբերում էր մահացության դեպքերին, ապա, անկասկած, «Փրկարար կացարանում» կազմակերպված խնամքը և որակյալ բուժսպասարկումն էին պատճառը, որ այդ թիվն ավելի մեծ չէր: «Պետք է իսկապես հրաշք անվանել, որ միայն 10-ն են մահացել,- գրում էր Յեպեն հետադարձ հայացքով, -եթե նկատի առնվի, որ նրանց մեծ մասը կամ մահվան ճիրաններում էր, երբ մեզ մոտ եկավ, կամ հիվանդության սաղմն այնքան զարգացած էր, որ մենք դրա դեմ ոչինչ չկարողացանք անել»[87]:

Ազատագրման՝ այդ վտանգավոր և սխրալից գործն իրականացվեց ոչ միայն նյութական, այլև մարդկային մեծագույն զոհաբերությունների գնով: Յեպեի երկու հավատարիմ գործակալների՝ Գրիգոր աղայի և Վասիլի ողբերգական ճակատագրի մասին արդեն տեղեկացվել է: Տևական զրկանքների ընթացքում թոքախտով հիվանդանալով՝ 1927-ին մահացան ևս երկուսը՝ Մուրադը և Եղիան[88]:

Ինչևէ, 1927-ը Ազգերի լիգայի հովանավորությամբ իրականացվող՝ ազատագրական աշխատանքների վերջին տարին էր, որի եզրափակմամբ փակվեցին նաև մասնաճյուղերը: Եվ Յեպեն, չնայած բազում դժբախտների հասանելի դարձած չլինելու կսկիծով, սակայն նաև իր հնարավորությունների առավելագույն օգտագործման գիտակցությամբ էր արժևորում կատարված աշխատանքը: «Մենք կարողացանք մեր մասնաճյուղերը հանգիստ խղճով փակել,- գրում էր նա իր տեղեկագրերից մեկում: «-Մենք չենք երկյուղել ջանքեր թափելուց և ծախսեր կատարելուց: Նույնիսկ, եթե ամենքին չենք հասել, ապա արել ենք այն ամենն, ինչ մեզ՝ որպես մարդկանց հնարավոր էր թվում»[89]:

Յեպեն, այնուամենայնիվ, մտադիր չէր իր գործունեությունը դադարեցնել, քանի դեռ կարող էին նոր փախստականներ ի հայտ գալ: Դա արձանագրվեց դեռ 1928 թ. հունվարին, երբ Թուրքիայից անօրինակ զրկանքների հաղթահարման գնով կարողացան Հալեպ հասնել 8 կանայք և աղջիկներ, որոնց այդ համարձակ ձեռնարկին մղել էր «Փրկարար կացարա-

84 Նրանցից 97-ը գտնվում էին Հալեպի «Փրկարար կացարանում», իսկ 13-ը նորահիմն հայկական գյուղում: Տես նույն տեղում, էջ 34:
85 Տես նույն տեղում:
86 Տես նույն տեղում, էջ 34-35: Անշուշտ բացառություն էին կազմում 1922-ին Հալեպ փոխադրված, արդեն հիշատակված այն 18 տղաները, ովքեր սեփական կամքով ետ էին վերադարձել մահմեդականների մոտ:
87 Տես նույն տեղում, էջ 34:
88 Տես նույն տեղում, էջ 33: Ցավոք, գործակալների վերաբերյալ կենսագրական տեղեկություններ չեն հաղորդվում: Հայտնի է միայն, որ Յեպեն այնուհետև կանոնավոր օգնություն էր ցուցաբերում նրանց ընտանիքներին:
89 Տես նույն տեղում, էջ 33:

նում» օթևան և աջակցություն գտնելու հույսը[90]: Ուստի Յեպեն շարունակում էր մնալ իր պոստում՝ բարեկամներին հեղեղելով օգնության կոչերով և աղերսագրերով: «Մենք այժմ այլևս երկրով մեկ ճամփորդություններ չենք կատարում կորած երեխաներին գտնելու համար,- նշում էր նա իր՝ 1928-ի նամակներից մեկում, -սակայն խնդրում ենք՝ օգնե՛ք մեզ մեր դուռը բաց և մեր լույսը վառ թողնելու համար, որպեսզի նրանք կարողանան տան ճանապարհը գտնել»[91]:

Օգնությունը չուշացավ. չնայած մասնաճյուղերը փակված էին, և «Փրկագնման գործը» պաշտոնապես համարվում էր ավարտված, բայց այն չդադարեց: Գործակալները շարունակում էին իրենց տենդագին որոնումները[92], և այն կազմակերպությունը, որը միայնակ ստանձնեց բոլոր՝ հետագա «փրկագների» վճարումը, Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն էր: Վերջինիս նյութական միջոցներով 1928-ի ընթացքում ազատագրվեցին և «Փրկարար կացարան» տեղափոխվեցին 67[93], 1929-ին՝ 29,[94] իսկ 1930-ին՝ 58 հայորդիներ[95]: Ընդ որում՝ 1930 թ. գարնանը նրանց հոսքը կտրուկ նվազեց, իսկ հուլիսից հետո արձանագրվեց փրկագնման միայն մեկ դեպք[96]: Այդ նվազումն օրինաչափ էր, քանի որ եղերական աքսորից արդեն անցել էր 15 տարի, և Յեպեն ու իր գործակալներն այլևս ոչ թե երեխաների հետ գործ ունեին, այլ հասուն մարդկանց, որոնք ոչ միայն օտարվել էին ազգային նկարագրից, այլև ամուսնական և այլ կապերով մերվել մահմեդական միջավայրին: Բացի այդ՝ նրանք արդեն ունեին կարծր համոզմունքներ կամ ինչպես Յեպեն էր խորհրդանշաբար ընդգծում՝ «սեփական կամք», որի վրա ազդելը շարունակ ավելի էր դժվարանում[97]:

Ինչևէ, 1930 թ. վերջին, երբ նոր փախստականներ այլևս ի հայտ չէին գալիս, և փրկագնված վերջին հայ աղջիկը դարձավ ինքնուրույն, «Փրկարար կացարանն» իր դռները մեկընդմիշտ փակեց[98]: Չնայած Յեպեն հետագայում իր հաստատություններից մեկում շարունակում էր մի սենյակ պահել հիվանդության և այլ պատճառներով վերստին իրեն ապավինող՝ նախկին սաների կամ նոր փախստականների ընդունման համար[99], սակայն այդպիսիք այլևս ի հայտ չեկան, և 1931-ից այդ աշխատանքը փաստացիորեն դադարեց:

Այսպիսով, Կ. Յեպեի՝ մոտ տասնամյա հայափրկիչ գործունեության ընթացքում մահմեդականների բնակավայրերից ազատագրվեցին և համակողմանի տևական խնամքից ու ուսումնառությունից հետո հայ ազգային-հավաքական կյանքում իրենց տեղը գրավեցին ընդհանուր թվով 1.900 կանայք, պատանիներ և աղջիկներ, որոնցից 705-ը՝ դր. Լեփսիուսի

90 Տես նույն տեղում, էջ 35:
91 Տես նույն տեղում:
92 **Hetzel G.,** Flucht vor dem Islam, „Orient im Bild“, 1929, S. 54.
93 Տես Unsere Lösegeldarbeit liegt noch nicht still, „Orient im Bild“, 1928, S. 65. Տես նաև՝ R. Schäfer, Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, „Orient im Bild“, 1929, S. 22
94 **Schäfer R.**, Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1929, „Orient im Bild“, 1930, S. 31.
95 **Schäfer R.**, Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1930, „Orient im Bild“, 1931, S. 21.
96 **Jeppe K.,** Schlußbericht über die Lösegeld-Befreiungs-Arbeit in Aleppo, ebd., S. 41.
97 Տես նույն տեղում, էջ 42:
98 Տես նույն տեղում, էջ 41:
99 Տես նույն տեղում:

ԳԱԱ-ի նյութական միջոցներով[100]:

3.Կարեն Յեպեի մյուս աշխատաձյուղերը Հալեպում

Ազատագրվող հայորդիներից շատերը ժամանակին առևանգվել էին մահմեդական գյուղացիների կողմից, վարժվել գյուղական կյանքին և քաղաքային առօրյային հեշտությամբ չէին կարող հարմարվել[101]: Մյուս կողմից՝ Սիրիայի քաղաքներում տիրող համատարած գործազրկության պայմաններում նույնիսկ որակյալ մասնագետների համար նյութական վաստակի ապահովումը խիստ դժվար խնդիր էր: Երկիրը տնտեսապես կազմալուծված էր, և դրա հետևանքներն առաջին հերթին զգալի էին դառնում մեծ քաղաքներում: Պատերազմից հետո Թուրքիայից առանձնանալով և զրկվելով Հայաստանն ու Անատոլիան Բաղդադի հետ կապող առևտրական ճանապարհներից՝ Սիրիան իր հետամնաց գյուղատնտեսությամբ այլևս չէր կարող սնել Հալեպի և մյուս մեծ քաղաքների բնակչությանը: Կենսամթերքի հարաճուն թանկացումները և համատարած գործազրկությունը սպառնալից էին դարձել նաև Հալեպի համար, որտեղ 1920-ական թթ. սկզբին անօրինակ ծանր պայմաններում հանգրվանել էին շուրջ 50.000 հայ փախստականներ[102]:

Սիրիայի և նրա բնակչության ապագան, Յեպեի համոզմամբ, կախված էր այդ երկրում գյուղատնտեսության զարգացումից: Նույն տեսակետն իշխում էր նաև Եվրոպայի և մասնավորապես Ֆրանսիայի պետական շրջանակներում[103]: Զարգացած երկրագործությանն անծանոթ արաբներից և վաչկատուն բեդվիններից այդ հարցում որևէ ակնկալիք ունենալ հնարավոր չէր: Այլ էր խնդիրը հայերի պարագայում, որոնք, ինչպես Յեպեն էր նշում, ի վիճակի էին հարմարվել ժամանակակից գյուղատնտեսության պահանջներին և կարող էին ամենից շուտ Սիրիան «մեռյալ կետից դուրս բերել»՝ իրենք ևս դուրս գալով տնտեսական ծանր վիճակից[104]: Հատկապես վերջին հեռանկարը Յեպեի համար առանձնահատուկ կարևորություն ուներ, քանի որ նրա համոզմամբ՝ այլ կերպ հնարավոր չէր լինի պայքարել Հալեպի ճամբարաբնակ հայերի մեջ տիրող ընդհանուր բարոյահոգեբանական ընկճվածության դեմ, որն ավելի սպառնալից և կործանարար էր, քան նյութական զրկանքները: Իր նկատառումը նա հիմնավորում էր

100 **Schäfer R.,** Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1930, ebd., S. 21. Կ. Յեպեն հայ ժողովրդին մատուցած իր ծառայությունների համար մեծ գնահատանքի արժանացավ նաև իր հայրենիքում՝ 1927-ին Դանիայի թագավորի կողմից պարգևատրելով ոսկե շքանշանով: Տես Karen Jeppe erhielt die goldene Medaille, „Orient im Bild“, 1927, S. 43.

101 Տես **Jeppe K.,** Rettung aus muhammedanischer Sklaverei. Wer hilft dazu?, „Der Orient“, 1924, S. 62.

102 Հայերի «ճամբարը» տեղավորված էր քաղաքից դուրս գտնվող մի քանի խարխուլ շենքերում և դրանց շուրջ կանգնեցված խրճիթներում ու վրաններում: Նրանց վերաբերյալ Յեպեի տեղեկությունները խիստ տպավորիչ էին: «Ավելորդ է ասել, որ յուրաքանչյուր ընտանիք այնքան տեղ չունի, որ գիշերը կարողանա մեկնվել,- տեղեկացնում էր նա 1924-ին: -Որ նրանց խրճիթները ձմռանը խոնավ, իսկ ամռանը շիկացման աստիճան տաք են, նույնպես ինքնին հասկանալի է: Չնայած հայկական մաքրասիրությանը, սանիտարական պայմանների մասին նույնպես միայն չափավոր կերպով է հնարավոր լինում հոգ տանել: Դա նպաստում է համաճարակների զարգացմանը, որոնց առաջին զոհերն, իհարկե, երեխաներն են: Անբավարար է նաև սնունդը, այնպես որ երեխաներն ամենևին դիմադրունակ չեն: Շատ տխուր վիճակ է: ...Հայերը նախաձեռնող են և աշխատունակ, այլապես արդեն կործանված կլինեին»: Տես **Jeppe K.,** Die Armenier in Syrien, ebd., S. 82-83.

103 Տես **Jeppe K.,** Die Armenier in Syrien, ebd., S. 84.

104 Տես նույն տեղում:

պատմության մեջ փաստարկված այն ճշմարտությամբ, որ «Հայը կործանվում է միայն այն ժամանակ, երբ այլևս չի կարող հուսալ»: «Մի ժողովուրդ,– նշում էր նա իր տեղեկագրերից մեկում,– որը հարյուրամյակներ շարունակ պայքար է մղել իր հավատի համար, իր ուժը պահպանում է անսասան լավատեսության մեջ, որը հայերին ի սկզբանէ հատուկ է եղել: Սակայն ոչինչ ավելի չի ճնշում իմ սիրտը, քան այն ազդեցությունը, որ ունեցել են վերջին տարիների բազմաթիվ, անտանելի ծանր հուսախաբությունները հայերի ներաշխարհի վրա: Նրանց հետ խոսելու կարիք չկա վտանգը նկատելու համար: Մարդկանց դեմքերի վրա հուսահատությունը տեսնում ես նույնիսկ փողոցում նրանց կողքով քայլելիս: Ողորմության միջոցով այժմ ոչնչի չես կարող հասնել: Մենք պետք է նրանց ապագա տանք...»[105]:

Ելնելով նշված նկատառումներից, ինչպես և հայերի ու արաբների միջև «խաղաղ համագոյակցության» նախադրյալներ ստեղծելու նպատակով Յեպեի դրդմամբ 1923-ին կայացած՝ Հայերի դանիացի բարեկամների միության համաժողովում որոշում ընդունվեց արաբական շրջաններից մեկում ստեղծել հայկական երկրագործական գաղութ[106]: Միության շվեդական բաժանմունքը ստանձնեց այդ ձեռնարկի նյութական հովանավորությունը, իսկ իրագործումը վստահվեց Յեպեին որպես Ազգերի լիգայի պատասխանատու հանձնակատարի[107]:

Յեպեի համար հեշտ չէր կատարել տարածքի ընտրությունը: Որոշ վայրերում, որտեղ մարդկանց անվտանգությունն ապահովված էր, բարձր էին հողի գները, իսկ այլ տարածքներում երաշխավորված չէր անվտանգությունը: Նման երկվությունը լուծվեց 1923 թ. սկզբին, երբ հայերին համատիրության սկզբունքով[108] իր կալվածքներում բնակեցնելու խնդրանքով հանդես եկավ բեդվինների պարագլուխներից մեկը՝ Հաջիմ փաշան, որն ի վիճակի էր իր սեփականությունն ու բնակիչներին պաշտպանել[109]:

1924 թ. գարնանը Եփրատից այն կողմ՝ Ռաքքայի և Թել-Աբիաթի միջև ընկած տարածքում, կատարվեց գաղութի հիմնումը, որն անվանվեց Թել-Սամեն, և որի բնակիչների թիվն աշնանը հասավ 200-ի[110]: Գրեթե անմիջապես հետո Յեպեն նախաձեռնեց նաև մեկ այլ գյուղի՝ Թել-Արմենի հիմնադրումը, որը գտնվում էր «Թել Սամենի» մերձակայքում՝ այդ գյուղից կես ժամվա հեռավորության վրա[111]:

---

105 Տես նույն տեղում, էջ 88:
106 Տես նույն տեղում, էջ 85:
107 Նույն տեղում:
108 Համատիրության սկզբունքը հետևյալն էր. կալվածատերը բնակեցնում էր գյուղացիներին, նրանց սերմացու և դրամ էր տալիս լծկաններ ու զանազան գործիքներ գնելու համար: Գյուղացիները կատարում էին պահանջվող աշխատանքը, և բերքահավաքից հետո եկամտի մեկ քառորդ մասը հատկացնում կալվածատիրոջը: Տես **Künzler J.,** Reise nach dem inneren Vorderasien, „Orient im Bild“, 1929, S. 5. Յեպեն անշուշտ ավելի ցանկալի էր համարում տարածքների գնումը, որի միջոցով հայերը կարող էին դառնալ լիիրավ սեփականատերեր, սակայն նրա համոզմամբ Սիրիայի ներքաղաքական իրադրությունը դրա համար դեռ բավականաչափ կայուն չէր: Տես **Jeppe K.,** Die Armenier in Syrien, „Der Orient“, 1924, S. 87.
109 Տես **Jeppe K.,** Neues Leben für die Armenier in der Heimat Abrahams, „Orient im Bild“, 1930, S. 78, 81-82.
110 Տես **Jeppe K.,** Die Armenier in Syrien, „Der Orient“, 1924, S. 86-87. Տես նաև **Jeppe K.,** Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, „Der Orient“, 1925, S. 39.
111 Տես **Jeppe K.,** Ein Jahr Rettungsarbeit, „Der Orient“, 1926, S. 71. Հմմտ. **Jeppe K.,** Das Kolonisations-Unternehmen in Charb-Bedros, „Orient im Bild“, 1928, S. 3-4. Հմմտ. **Hetzel G.,** Zu Misak nach Tineh, „Orient im Bild“, 1931, S. 59. Տես նաև Zum Tode Karen Jeppes, „Orient im Bild“, 1935, S. 30. Գյուղերի հիմնման աշխատանքները կազմակերպեց և ղեկավարեց Մ. Մելքոնյանը: Տես **Gaszczuk L.**, Im gesegneten Lande Mesopotamien, „Orient

Նոր գաղութներում հյուղերի կառուցման և բնակեցման համար յուրաքանչյուր ընտանիքի փոխարինաբար հատկացվում էր 200 մարկ կազմող մի գումար, որը մեծ մասամբ նորաբնակների առաջին բերքահավաքից հետո ետ էր վերադարձվում[112]: Ճամբարականներից զատ՝ այնտեղ բնակություն հաստատեցին նաև Յեպեի կողմից ազատագրված երիտասարդների մի մասը, որոնք այնուհետև սկսեցին ընտանիքներ կազմել հիմնականում իրենց բախտակից հայուհիների հետ: Թել-Սամենում տեղավորվեցին նաև ազատագրված ամենափոքրիկ տղաները, որոնց ուսման համար հիմնվեց մի դպրոց[113]:

Գյուղերի հիմնումից հաշված ամիսներ անց, ինչպես և սպասելի էր, շրջանում երկրագործությունը թռիչքային վերելք ապրեց: Ինչպես ժամակակակիցն էր վկայում, շրջակա տարածքների տեսքն ամբողջովին փոխվեց, ի հայտ եկան «հրաշալիորեն խնամված այգիներ», որպիսիք այդ վայրերում մինչ այդ տեսնված չէին: Միաժամանակ հայերի և տեղացի արաբների միջև ձևավորվեցին բարիդրացիական հարաբերություններ, և, որ ամենակարևորն էր, նախկին հուսալքությունն այլևս չկար, և մարդիկ ապագային նայում էին «ուրախ ու վստահորեն»[114] . «Որքա՛ն ուրախալի է, որ նրանք 1,5 տարի անցնելուց հետո ոչ միայն առատ սնունդ և հագուստ ունեն, այլև քսակում փող,- գրում էր Յեպեն իր տեղեկագրերից մեկում: -Նրանցից շատերն արդեն կարողացել են նաև լծկաններ գնել...»[115]:

Առաջին հաջողությունից ոգևորված՝ Յեպեն մտադիր էր հիմնել այլ գյուղավաններ ևս, սակայն 1925-ին նա հարկադրված եղավ դա առժամանակ հետաձգել՝ իր բոլոր հնարավորությունները նպատակաուղղելով երաշտի, գործազրկության և աննախադեպ թանկացումների պայմաններում սովամահության դատապարտված ճամբարաբնակների փրկությանը: «Հալեպի ճամբարի խեղճ բնակիչները պարզապես այլևս ուտելու ոչինչ չունեն,- գրում էր նա 1925-ին Լեփսիուսին ուղղված իր նամակներից մեկում: -Ամեն բան միավորվել է այդ թշվառ մարդկանց կործանելու համար, և ճամբարում արդեն սովահարություն է տիրում...»[116]:

Օր. Յենսենի հետ ճամբարում տիրող իրադրությունը մանրազնին հետազոտելուց հետո Յեպեն 1925 թ. աշնանն այնտեղ հիմնեց մի խոհանոց, որը մինչև հաջորդ տարվա գարնան սկիզբը ամենօրյա սնունդով ապահովեց 700 երեխաների[117]: Միաժամանակ նա ճամբարին կատարեց 100 ֆունտ ստեռլինգ նվիրատվություն ծծկեր երեխաներին կաթով ապահո-

im Bild", 1932, S. 25-26.

112 Տես **Jeppe K.,** Ein Jahr Rettungsarbeit, „Der Orient", 1926, S. 71. Գյուղերի բոլոր բնակիչները երկու տարվա ընթացքում նյութապես միանգամայն անկախացան: Տես **Jeppe K.,** Das Kolonisations-Unternehmen in Charb-Bedros, „Orient im Bild", 1928, S. 4.

113 Տես Karen Jeppes Arbeit, „Der Orient", 1926, S. 6. Օգտվելով այն հանգամանքից, որ այդ գյուղերը գտնվում էին «բեդվինների երկրի» կենտրոնում, որտեղ առևանգված երեխաների և կանանց թիվն ըստ նախնական հաշվարկների, պետք է շատ մեծ լիներ, Յեպեն դրանք դարձրեց նաև փրկարար աշխատանքների հենակետ: Նրա կողմից Թել Սամենում հիմնվեցին որոնման մի նոր գաղտնի գործակալություն և հավաքակայան, որոնք մեծ նշանակություն ունեցան հետագա փրկարար աշխատանքներում: Տես **Jeppe, K.,** Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, „Der Orient", 1925, S. 39.

114 **Jeppe K.,** Die Armenier in Syrien, „Der Orient", 1924, S. 87. Տես նաև՝ **Gaszczyk L.**, Im gesegneten Lande Mesopotamien, „Orient im Bild", 1932, S. 26.

115 Տես Karen Jeppes Arbeit, „Der Orient", 1926, S. 8.

116 Տես նույն տեղում, էջ 7-8:

117 **Jeppe K.,** Ein Jahr Rettungsarbeit, ebd., S. 70.

վելու համար: Բացի այդ՝ նրա կողմից լրացուցիչ դրամական հատկացումներ էին կատարվում երեխաներ ունեցող ընտանիքներին, բաժանվում էին հագուստներ, կազմակերպվում էին ձրի բուժօգնություն և այլ ծառայություններ, որոնց համար միայն 1925 թ. ընթացքում ծախսվեց մոտ 250 ֆունտ ստեռլինգ[118]: Այդ աշխատանքները, որոնք իրագործվում էին հիմնականում Ազգերի լիգայի խիստ սահմանափակ միջոցների հաշվին, բավարար չէին անասելի ծանր պայմաններում գտնվող Հալեպի ճամբարականների դրությունը փոքրիշատե տանելի դարձնելու համար, քանզի նրանց թիվը 1926-ին հասնում էր 17 հազարի[119]: Անհրաժեշտ էին այլ՝ ընդգրկուն և արմատական միջոցառումներ, և 1926 թ. աշնանը նրան օգնության հասավ նաև Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն՝ ստանձնելով ճամբարի որբ կամ առնվազն հայրերից զրկված՝ թվով 100 երեխաների խնամքը[120]:

Ընկերության կողմից ստանալով որբերի հավաքագրման և խնամքի կազմակերպման հանձնարարականը՝ Յեպեն վճռեց գործել մի բոլորովին այլ, դեռ իր նախադեպը չունեցող եղանակով, որ հնարավորություն էր ընձեռում օգնել նաև այրիներին, և, ինչպես կարճ ժամանակում պարզվեց, շատ ավելի արդյունավետ էր, քան որբանոցի ստեղծումը: «Ինձ ցավ էր պատճառում երեխաներին իրենց մայրերից բաժանելու և որբանոց փոխադրելու միտքը, -այդ առնչությամբ նշում էր նա: -Ոչ ոք և ոչինչ չի կարող փոխարինել մայրական սիրուն կամ սեփական տանը: Բաժանումը որքա՛ն պետք է տխրեցներ նաև մայրերին, որոնք արդեն հաղթահարել էին անասելին: Նաև քույրերը և եղբայրները (որոնք բոլորը չէին կարողանա գալ որբանոց) պետք է մնային նեղության մեջ, մինչդեռ մյուսները խնամվելու էին: Այդ գաղափարն ինձ ամենևին դուր չէր գալիս: Այո, ես այն պարզապես չէի կարող ընդունել: Ինչու՞ ես պետք է այդ անեի՝ հարց էի տալիս ինքս ինձ, եթե մենք որբանոցում երկու երեխայի համար պետք է ավելին ծախսենք, քան կարող է ծախսվել երեք երեխային իրենց մոր մոտ խնամելու դեպքում»[121]:

Յեպեն, այսպիսով, վճռեց երեխաների խնամքն իրականացնել նրանց մայրերի, իսկ եթե վերջիններս այլևս կենդանի չէին, ապա միայնակ այրիների միջոցով, որոնց և հանձնվեցին բացառապես որբ երեխաները[122]: Ընդ որում՝ այդ պարտականությունը հանձնարարվում էր «լավագույններին», որոնք կարող էին նրանց խնամքն ու դաստիարակությունը պատշաճ կերպով իրականացնել[123]: Յեպեն սուպի խոհանոցից նրանց ամեն օր «առատ և լավ ճաշ» էր հատկացնում՝ յուրաքանչյուր ամիս հանձնելով նաև որոշակի գումար անհրաժեշտ ծախսերը հոգալու համար և, բացի այդ, տրամադրում էր նաև երեխաների հագուստի, ուսման, ինչպես և ողջ ընտա-

118 Տես նույն տեղում:

119 Տես նույն տեղում: «Այս տարվա թանկացումները,- գրում էր Յեպեն 1926-ին,- միանալով գործազրկությանը, ճամբարի փախստականների գոյատևումը գրեթե անհնար են դարձրել: Տես **Jeppe K.,** Im Flüchtlingslager von Aleppo, „Orient im Bild“, 1927, S. 21-22.

120 Տես **Jeppe K.,** System und Ziel der Waisenpflege in Aleppo, „Orient im Bild“, 1929, S. 2.

121 Նույն տեղում:

122 **Schütz P.**, Frl. Jeppes Witwenkolonie bei Aleppo, „Orient im Bild“, 1928, S. 56-57. Միայնակ այրիներից յուրաքանչյուրին միջին հաշվով հատկացվեցին 3-4 որբեր: Տես **Jeppe K.,** Unsere Waisenarbeit in Aleppo im Jahre 1932, „Orient im Bild“, 1933, S. 11.

123 **Jeppe K.,** System und Ziel der Waisenpflege in Aleppo, „Orient im Bild“, 1929, S. 2.

նիքի բուժսպասարկման ծախսերը[124]:

Քանի որ այրիների մեծ մասն ապրում էր ծայրահեղ խղճուկ և հակասանիտարական վիճակում գտնվող հյուղերում, որոնք որբանոցի պահանջներին չէին համապատասխանում, աշխատանքի մեկնարկից հետո Յեպեի հաջորդ խնդիրը դարձավ նրանց բնակարանային պայմանների բարելավումը: Համեմատաբար բարեկարգ՝ փոքրաթիվ խրճիթները նրա միջոցներով վերանորոգվեցին և ընդարձակվեցին[125]: Իսկ ինչ վերաբերվում էր մյուս ընտանիքներին, ապա Յեպեն Հալեպի «Փրկարար կացարանի» մերձակայքում գնեց մի հողակտոր՝ այն հատկացնելով բնակարանների շինարարությանը[126]: 1927-ին այնտեղ վեր խոյացան առաջին նորակառույցները՝ բաղկացած 6-ական ընդարձակ սենյակներից, որոնցից յուրաքանչյուրը նախատեսված էր մեկ այրու և նրա երեխաների բնակության համար[127], իսկ 1928 թ. առաջին կեսին արդեն պատրաստ էին 7 այդպիսի շենքեր, որտեղ բնակություն էին հաստատել 40 այրիներ 100 երեխաների հետ միասին[128]: «Այդ գաղութը մի իսկական «որբանոց» է,- գրում էր Յեպեն,- այն միակ տարբերությամբ, որ այնտեղ ապրում են նաև մայրերը: Եվ ես կարծում եմ, որ թե՛ մայրերը, թե՛ երեխաները ուրիշ ոչ մի տեղ ավելի երջանիկ չէին կարող լինել»[129]:

Այսպիսով՝ Կ. Յեպեն որբախնամության իր առաջադրանքն իրականացրեց ոչ թե առանձին որբանոցի, այլ ընտանիքների հիմնման միջոցով՝ երեխաներին տրամադրելով մայրեր, իսկ մայրերին՝ երեխաներ: Այդ կերպ վերջիններիս խնամքն ու դաստիարակությունը ավելի նպատակային և վերահսկելի դարձան, քան կարող էր լինել որևէ որբանոցում, և, բացի այդ, հնարավորություն ստեղծվեց որբանոցի համար հատկացված միջոցներով հոգ տանել նաև Հալեպի՝ ոչ պակաս անօգնական վիճակում գտնվող այրիների մասին, որոնք այլևս դրսում աշխատանք և վաստակ որոնելու անհրաժեշտություն չունեին: «Այրիներն ունեցան ընտանիք, իսկ որբերը՝ մայր,- նշում էր այդ առթիվ Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի տնօրեն դր. Շյութցն իր տեղեկագրերից մեկում: -Այրիների խնդիրը լուծված է, լուծված է նաև որբերինը: Եվ այն էլ այնպիսի եղանակով, որը մեր ժամանակակից դաստիարակության իդեալին ավելի է համապատասխանում, քան մինչայժմյան պրակտիկան»[130]:

Իսկ որ առավել ուշագրավ է, նոր մեթոդը Յեպեին հնարավորություն ընձեռեց մոտ կիսով չափ կրճատել որբերի խնամքի համար նախատեսված

124 Տես նույն տեղում, էջ 3:
125 Տես նույն տեղում, էջ 2:
126 Յեպեն հողամասը գնեց դանիացի մի բարեկամի կողմից իրեն կտակված գումարով: Տես նույն տեղում էջ 3:
127 Նրանցից յուրաքանչյուրում կար նաև մի ընդհանուր նկուղ, խոհանոց և ճաշասենյակ: Տես **Schütz P.,** Frl. Jeppes Witwenkolonie bei Aleppo, „Orient im Bild“, 1928, S. 56–57:
128 Տես **Schütz P.**; J. Künzler, Reise nach dem inneren Vorderasien, ebd., S. 58.
129 **Jeppe K.,** System und Ziel der Waisenpflege in Aleppo, „Orient im Bild“, 1929, S. 3.
130 **Schütz P.**, Frl. Jeppes Witwenkolonie bei Aleppo, „Orient im Bild“, 1928, S. 56. Գտնելով օր առաջ շուտ որբերին և այրիներին օգնության հասնել՝ Յեպեն նոր «որբանոցի» իր ծրագիրն իրականացրեց՝ առանց դա նախապես Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի տնօրինության հետ համաձայնեցնելու, ապավինելով նրա այսպես կոչված՝ «հետին թվով» թույլտվությանը: Տես **Jeppe K.,** System und Ziel der Waisenpflege in Aleppo, „Orient im Bild“, 1929, S. 2. Այն բնականաբար չուշացավ. «Մենք Հալեպի մեր հոգեծնողներին տեղեկացնում ենք,- նշվում էր ընկերության՝ 1929 թ. սկզբին բարեկամներին ուղղված մի շրջաբերականում,- որ մեր հոգաբարձությունը հետին թվով հավանություն է տվել օր. Յեպեի նախորդ տարվա փորձին և որոշել է որբախնամության այդ ձևը դարձնել մնայուն»: Տես **Mitteilungen**, ebd., S. 8.

ծախսերը և այդ տնտեսման միջոցով խնամքի տակ վերցնել անհամեմատ ավելի մեծ թվով երեխաների ու համապատասխանաբար նաև այրիների[131]: Եթե սովորական որբանոցում (ինչպես օրինակ Ղազիրի հաստատությունում) յուրաքանչյուր երեխայի խնամքի տարեկան ծախսերը կազմում էին ոչ պակաս, քան 480 մարկ, ապա Հալեպի «ընտանեկան որբանոցում» այդ գումարը չէր գերազանցում 240 մարկի սահմանագիծը[132]: Ուստի եթե Յեպեն 1927 թ. վերջին, համաձայն Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի ցուցումների, հավաքագրել էր միայն 100 որբերի[133], ապա 1928-ին այդ թվակազմի համար նախատեսված միջոցներով՝ նրա «որբանոցում» խնամվում էին 220[134], 1929-ին 170[135], 1930-ին 207[136], 1931-ին 164[137], 1932-ին 173[138], իսկ 1933-ին 163 երեխաներ[139]: Բացի այդ՝ կատարված խնայողությունների հաշվին նա 1929-ին, քանդելով հայկական ճամբարի ամենավատթար վիճակում գտնվող խրճիթները, դրանց տեղում կառուցեց մի ընդարձակ և հարմարավետ բնակելի շենք, որը կոչվեց «Լեփսիուսի տուն», և որտեղ բնակություն հաստատեցին այրիների և որբերի 5 ընտանիքներ[140]:

Դժվար է գերագնահատել այն նշանակությունը, որն ուներ Յեպեի և Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի որբախնամ գործունեությունը Հալեպի տարագիր հայության համար: «Ամենասարսափելին կլիներ որբ երեխաների վիճակը, եթե նրանք Գերմանիայից օգնություն չստանային,- գրում էր Յեպեն 1933 թ. ամռանը: -Որքա՛ն մեծ օրհնություն է Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի որբախնամ գործունեությունը Հալեպի փախստականների ճամբարի համար: Աստված թո՛ղ պահապան լինի, որպեսզի այն չդադարի, այլապես մի քանի հարյուր որբ երեխա պարզապես սովամահության կդատապարտվեն[141]: «Որբանոցի» կամ, ինչպես այն հաճախ կոչվում էր, «որբերի և այրիների գաղութի» դպրոցահասակ երեխաները հաճախում էին մերձակա հայկական դպրոցները[142], և, բացի այդ, Յեպեի կողմից տրամադրված մանածագործական հաստոցների միջոցով հմտանում արհեստագործության մեջ[143]: Թե՛ դպրոցում և թե՛ տանը նրանք մշտապես գտնվում էին Յեպեի և նրա աշխատակիցների հոգատար հսկողության ներքո: «Մենք փորձում ենք, որքան հնարավոր է, փոխարինել մահացած հորը,- գրում էր այդ առթիվ Կ. Յեպեն իր՝ 1933-ի տեղեկագրերից մեկում,- ջանում ենք անել այն ամենը, ինչ նա իր ընտանիքի համար կաներ, թե՛ նյութական և թե՛ հոգևոր առումով: Մենք անշուշտ չենք կարող ամբողջությամբ փոխարինել նրա անձին և սիրուն, սակայն մյուս կողմից՝ մեր օգնությունը և ուշադրությունը

131 Տես նույն տեղում: Տես նաև. **Schäfer R.**, Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission 1928, ebd., S. 22.
132 Տես **Mitteilungen**, ebd., S. 31.
133 Տես **Schäfer R.**, Zur umstehenden Jahresrechnung 1926, „Der Orient“, 1927, S. 31.
134 Տես **Schäfer R.,** Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission 1928, „Orient im Bild“, 1929, S. 22.
135 Տես **Schäfer R.,** Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für das Jahr 1929, „Orient im Bild“, 1930, S. 31.
136 Տես **Schäfer R.,** Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1930, „Orient im Bild“, 1931, S. 21.
137 Տես **Schäfer R.,** Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1931, „Orient im Bild“, 1932, S. 11.
138 Տես **Schäfer R.,** Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission 1932, „Orient im Bild“, 1933, S. 14.
139 Տես **Schäfer R.,** Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, „Orient im Bild“, 1934, S. 11.
140 Տես **Schäfer R.,** Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, „Orient im Bild“, 1930, S. 31. Vgl. **Jeppe K.,** Die Sahagian-Schule in Aleppo, „Orient im Bild“, 1932, S. 35.
141 Տես **Jeppe K.,** Die Lage der Armenier in Aleppo, „Orient im Bild“, 1933, S. 45.
142 Տես **Jeppe K.,** Die Sahagian-Schule in Aleppo, „Orient im Bild“, 1932, S. 35.
143 Տես **Schütz P.,** Frl. Jeppes Witwenkolonie bei Aleppo, „Orient im Bild“, 1928, S. 57.

նրա զավակների հանդեպ գերազանցում են... Այնպես որ մեր որբերը խաղավայրերում կամ դպրոցում իրենց խնամված տեսքով մեծ մասամբ հեշտությամբ ճանաչվում են»[144]:

Հաջորդ և թերևս ոչ պակաս կարևոր առաքելությունը, որը Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի աջակցությամբ ստանձնեց Յեպեն, Հալեպի ճամբարի առավել անապահով ընտանիքների երեխաների սնուցումն էր: Ընկերության միջոցներով 1929-ին կյանքի կոչվեց այսպես կոչված «Կերակրվող երեխաների» աշխատաճյուղը, որն անընդմեջ գործեց նաև հաջորդ տարիներին, և որի շրջանակներում հիշյալ երեխաները Կ. Յեպեի հիմնած խոհանոցում օրական մեկ անգամ առատ և որակյալ սնունդ էին ստանում: Ընդ որում՝ յուրաքանչյուր երեխայի սնուցման ամսական ծախսերը կազմում էին 6-8 մարկ՝ կախված սննդամթերքի տեղական գներից[145]: Եթե նկատի առնվի, որ 1929-1933 թվականների ընթացքում ամենօրյա տաք սնունդով այնտեղ ապահովված էին համապատասխանաբար՝ 143[146], 162[147], 129[148], 150[149] և 124 երեխաներ[150], ապա ակնհայտ կդառնա, թե այդ աջակցությունը ինչպիսի ծավալ և նշանակություն ուներ Հալեպի սովահար հայ ընտանիքների համար:

Հատկանշական է, որ Յեպեն շարունակում էր պահպանել նաև ամենամյա իրեղեն նվիրատվությունների ավանդույթը, որը, ծավալային առումով ընդլայնվելով, 1928-ից դարձավ Հալեպում իրականացվող օգնության աշխատանքների կարևոր բաղկացուցիչ մասը: Ընդ որում՝ դրանք հավասարապես վերաբերում էին և՛ «որբանոցային», և՛ «կերակրվող» երեխաներին: Ըստ այդմ՝ 1928-ին հագուստեղենով և այլ անհրաժեշտ պարագաներով լի 11 ծանրոց ուղարկվեց Հալեպ, և ևս 7-ը՝ Ղազիր[151], որոնց ընդհանուր քաշը կազմում էր 1.865 կգ[152]: 1929-ին կատարվեց 4.099 կգ իրեղեն առաքում, որից 3.043 կգ-ը՝ դեպի Հալեպ, իսկ 1056 կգ-ը՝ Ղազիր[153]: 1930-ին Հալեպ և Ղազիր առաքվեցին համապատասխանաբար 21 և 5 ծանրոցներ, որոնց ընդհանուր քաշը 3.682 կգ. էր[154]: 1931-ից այդ հատկացումները նախատեսվում էին բացառապես Հալեպի երեխաների համար, քանի որ Ղազիրի որբանոցի նոր վայրը՝ Քեսաբը, կանոնավոր երթևեկության գոտիներից հեռու էր[155]: Ըստ այդմ՝ 1931-ին կատարվեցին ընդհանուր քաշով՝ 2.120 կգ.[156], իսկ 1933-ին՝ 2050 կգ.[157] իրեղեն առաքումներ: Դրանք, ի դեպ, կազմակերպության խնամառության ներքո գտնվող երեխաների

144 Տես **Jeppe K.,** Unsere Waisenarbeit in Aleppo im Jahre 1932, „Orient im Bild“, 1933, S. 11.
145 Տես **Gaszczyk L.,** Eine halbe Stunde im Flüchtlingslager, „Orient im Bild“, 1929, S. 79. Vgl., Mitteilungen, „Orient im Bild“, 1931, S. 40.
146 Տես **Schäfer R.,** Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1929, „Orient im Bild“, 1930, S. 31.
147 Տես **Schäfer R.,** Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1930, „Orient im Bild“, 1931, S. 21.
148 Տես **Schäfer R.,** Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1931, „Orient im Bild“, 1932, S. 11.
149 Տես **Schäfer R.,** Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission 1932, „Orient im Bild“, 1933, S. 14. Ամբողջ տարվա ընացքում հաստատուն պահվող այդ թիվը տարեվերջին իջավ 132-ի: Անդ [op. cit.]:
150 Տես **Schäfer R.,** Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, „Orient im Bild“, 1934, S. 11.
151 Լիբանանի Ղազիր բնակավայրում Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն պահում էր ևս մեկ որբանոց, որը հանձնվել էր Յակոբ Կյուսցլերի ղեկավարմանը: Այն որոշ ժամանակ անց տեղափոխվեց Քեսաբ:
152 Տես **Schäfer R.,** Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission 1928, „Orient im Bild“, 1929, S. 22.
153 Տես **Schäfer R.,** Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1929, „Orient im Bild“, 1930, S. 31.
154 Տես **Schäfer R.,** Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1930, „Orient im Bild“, 1931, S. 22.
155 **Schäfer R.,** Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1931, „Orient im Bild“, 1932, S. 11.
156 Տես նույն տեղում:
157 Տես **Schäfer R.,** Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, „Orient im Bild“, 1934, S. 11.

կարիքների բավարարումից զատ, հնարավորություն էին ընձեռում օժանդակություն ցուցաբերել նաև Հալեպի ունեզուրկ հայ ընտանիքներին՝ զգալիորեն թեթևացնելով նրանց զրկանքները[158]:

Ինչևէ, Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի կողմից Հալեպի որբ և անապահով երեխաների և այրիների խնամքի ստանձնումը Կ. Յեպեին հնարավորություն ընձեռեց օգնության հասնել նաև ծանր սոցիալական պայմաններում գտնվող մյուս ճամբարաբնակներին, որոնց թվաքանակը 1928-ին հասնում էր մոտ 15 000-ի[159]: Մարդկանց այդ հոծ զանգվածին ցուցաբերվող օգնությունը, որը սովորաբար կրում էր «Հիվանդների և աղքատների խնամքը» անվանումը և մինչև 1929-ը տեղի էր ունենում ամերիկացի, դանիացի և շվեյցարացի բարեկամների միջոցներով, առաջին հերթին նպատակ ուներ պահպանել ընտանիքների կերակրողներին՝ այդպիսով կանխելով նոր որբերի ի հայտ գալը[160]: Այդ առումով բնականաբար առաջնահերթ կարևորություն ուներ թերսնման և անբավարար կենսապայմանների հետևանքով մեծ տարածում գտած հիվանդությունների դեմ պայքարը, որին Յեպեն ձեռնամուխ եղավ բուժսպասարկման աշխատանքների միջոցով: Ընտանիքների կերակրողները հիվանդության դեպքում ապավինում էին Յեպեին, որը նրանց անհատույց բուժօգնություն էր տրամադրում: Ընդ որում՝ հիվանդության հետևանքով անաշխատունակ դարձող հիվանդները բուժման ընթացքում ստանում էին համալիր խնամք՝ ապահովվելով նաև որակյալ սնունդով[161], և բացի այդ՝ կանոնավոր կերպով սննդամթերք էր մատակարարվում նաև այլապես սովահարության դատապարտված նրանց ընտանիքների անդամներին[162]: Աշխատանքների ծավալի վերաբերյալ հստակ պատկերացում տալու համար արժե նշել, որ 1927 թ. հունիսից մինչև 1929 թ. փետրվարն ընկած ժամանակահատվածում կլինիկայում կամ տնային պայմաններում բժշկական սպասարկում ցուցաբերվեց շուրջ 1.000 հիվանդների, որոնց մեկ քառորդն իրենց ընտանիքի անդամների հետ միասին ապահովվել էին նաև սնունդով[163]:

1929-1930 թվականներին այդ աշխատաճյուղին կարողացավ իր մեծ ներդրումը բերել նաև Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն: 1929 թ. ընթացքում Կ. Յեպեի կողմից բուժսպասարկման ենթարկվեցին ընդհանուր թվով 868 հիվանդներ, որոնցից 167-ը գտնվում էին համալիր խնամքի ներքո[164]: Նրանց բուժման ընդհանուր ծախսերը կազմեցին 579, 03 թուրքական ֆունտ, որի

158 Տես **Schäfer R.,** Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1929, „Orient im Bild“, 1930, S. 31.
159 «Դեռ չի կարելի ասել, թե իրավիճակը տանելի է,- նշված էր 1928 թ. նոյեմբերին Հալեպից ստացված տեղեկագրերից մեկում: -Փոքրիկ, հին ժանգոտված նավթամաններով ծածկված 3500 կավե և փայտե հյուղերում բնակվում է 12000-12500 փախստական: Քամին, անձրևը և փոշին տանիքից ներս են խուժում: Մարդիկ մատնված են ցրտին և տապին: Նրանց «բնակարանները» բաղկացած են մի փոքրիկ խցից, որը միաժամանակ ծառայում է որպես խոհանոց, ճաշասենյակ և ննջարան: Շատ դեպքերում բազմաթիվ ընտանիքներ ստիպված են միասին ապրել մի նման խցում: Տես **Gaszcyk, L.**, Die Zustände in den syrischen Flüchtlingslagern, „Orient im Bild“, 1929, S. 7:
160 Տես **Jeppe K.,** Aus der Arbeit im armenischen Flüchtlingslager Aleppo, ebd., S. 44.
161 Տես նույն տեղում:
162 Տես նույն տեղում:
163 Տես նույն տեղում: Յեպեն ճամբարում պահում էր մի հիվանդապահուհու, որն այնտեղ ապրելով՝ մշտապես հոգ էր տանում հիվանդներին: Դա հնարավորություն էր ընձեռում կանխել բազմաթիվ նոր հիվանդությունների առաջացումը կամ դրանք բուժել դեռ զարգացման սկզբնական փուլում: Տես նույն տեղում:
164 Տես **Gaszczyk L.,** Jeppe K., Kranken- und Armenfürsorge im armenischen Flüchtlingslager von Aleppo 1930, „Orient im Bild“, 1931, S. 28. Տես նաև **Jeppe K.,** Kranken- u. Armenfürsorge im armenischen Flüchtlingslager Aleppo. 1 Januar bis 31 Dezember 1929, „Orient im Bild“, 1930, S. 47.

գրեթե կեսը՝ 252 ֆունտ (4620 մարկ), հատկացվել էր Լեփսիուսի կազմակերպության կողմից[165]: Վերջինիս աջակցությունը Յեպեին հնարավորություն ընձեռեց սպասարկման ծավալն ամբողջովին համապատասխանեցնել ճամբարի կարիքներին՝ այն կազմակերպելով ամենաարդյունավետ ժամկետներում: «Մենք հիվանդների համար միշտ պատրաստ ենք,– գրում էր նա 1929-ին,– ոչ ոք չի մերժվում և ոչ ոք կարիք չունի անտեղի սպասել»[166]:

Հաջորդ տարի՝ 1930 թվականին, սպասարկվեցին 2.187 հիվանդներ, որոնց բուժման համար ծախսվեց 882 թուրքական ֆունտ, և որոնցից համալիր խնամքի տակ էին գտնվում 406-ը[167]: Չնայած այդ տարվա տեղեկագրերում ներկայացվել են միայն աշխատանքի ընդհանուր վիճակագրական ցուցանիշները, և առանձին կազմակերպությունների՝ այդ թվում նաև Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի չափաբաժնի վերաբերյալ տվյալներ չեն հաղորդվել, սակայն որոշ տեղեկություններից կարելի է կռահել, որ դրանք զգալիորեն գերազանցում էին նախորդ տարվա համամասնական ցուցանիշները: «Այս տարի,– նշված էր, օրինակ, ընկերության պարբերականի՝ 1930-ի հունիսյան համարում,– այդ աշխատաձյուղին օգնելու համար մեզ դեռ միջոցներ չեն պակասել»[168]:

1931-ից Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն այլևս չէր կարող էական մասնակցություն ցուցաբերել այդ աշխատանքներին՝ հարկադրված լինելով համաշխարհային տնտեսական ճգնաժամի պայմաններում իր բոլոր ռեսուրսները նպատակաուղղել միայն իր միջոցներին ապավինած աշխատաձյուղերի պահպանմանը[169]: Իսկ «Հիվանդների և աղքատների խնամքը», որն ուներ այլ հովանավորներ ևս, մեծ ջանքերի և որոշ սահմանափակումների գնով շարունակվեց նաև հաջորդ տարիներին[170]:

Ինչևէ, այն հանգամանքը, որ նշված համապարփակ օժանդակությունների շնորհիվ հաջողվեց ճամբարականների դրությունը բավականաչափ կայունացնել, Յեպեին հնարավորություն էր ընձեռում դարձյալ ձեռնամուխ լինել նրանց տնտեսական լիարժեք անկախացման՝ իր հիմնական ծրագրի իրագործմանը, որի օգտակարությունն արդեն գործնականում լիովին փաստարկվել էր: «Մենք մեր աշխատանքն այնքան ժամանակ չենք կարող համարել ավարտված,– նշում էր նա,– քանի դեռ հայ փախստականների մեծ մասին չենք տեղավորել հողի վրա»[171]: Ըստ այդմ՝ 1928 թ. գարնանը նա Եփրատից այն կողմ ընկած լայնարձակ տափաստանում՝ Թել-Սամե-

165 Տես նույն տեղում: Ճամբարում առավել մեծ տարածում ունեին տուբերկուլյոզը, թոքերի բորբոքումը, աչքերի տրախոմա հիվանդությունը, դիզենտերիան, մալարիան և այլն: Տես նույն տեղում:

166 **Jeppe K.,** Aus der Arbeit im armenischen Flüchtlingslager Aleppo, „Orient im Bild“, 1929, S 44.

167 Տես **Gaszczyk L.,** K. Jeppe, Kranken- und Armenfürsorge im armenischen Flüchtlingslager von Aleppo 1930, „Orient im Bild“, 1931, S. 28.

168 **Jeppe K.,** Kranken- u. Armenfürsorge im armenischen Flüchtlingslager Aleppo, „Orient im Bild“, 1930, S. 47. 1930-ից ռևմատիզմով, հոդատապով և իշիասով տառապող հիվանդներն ուղարկվում էին Հալեպից 90 կմ հեռավորության վրա գտնվող, հանքային բուժիչ ջրերով հայտնի՝ Էլ Համամի առողջարանը, որտեղից մեծ մասամբ վերադառնում էին ամբողջովին ապաքինված: Տես **Gaszczyk L.,** Unsere Kranken im Schwefelbad, „Mitteilungen an unsere Mitglieder und Freunde!“, 1940, S. 19-20.

169 Տես **Jeppe K.,** Kranken- u. Armenfürsorge im armenischen Flüchtlingslager von Aleppo, 1931, „Orient im Bild“, 1932, S. 27. Հմմտ. **Jeppe K.,** Kranken- und Armenfürsorge im armenischen Flüchtlingslager von Aleppo im Jahre 1932, „Orient im Bild“, 1933, S. 24.

170 Տես նույն տեղում, էջ 23-24:

171 **Jeppe K.,** Ein Jahr Rettungsarbeit, „Der Orient“, 1926, S. 71.

նից և Թել-Արմենից ոչ մեծ հեռավորության վրա, հիմնեց երրորդ հայկական գյուղը՝ Շարբ-Պետրոսը, որը, ի տարբերություն նախորդների, հիմնականում նախատեսված էր «փրկագնված» երեխաների բնակության համար, մասնավորապես նրանց, ովքեր չէին կարողանում ընտելանալ քաղաքային միջավայրին և միաժամանակ «ընդդիմանալ տափաստանի ձգողական ուժին»[172]: Գյուղի հիմնման միջոցները հատկացվեցին Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի կողմից, և դեռ գարնանն այնտեղ փոխադրվեցին 45 տղաներ, որոնք սկզբնական շրջանում Մ. Մելքոնյանի ղեկավարության և հսկողության ներքո ապրում և աշխատում էին մի ընդհանուր կացարանում[173]: Փրկագնված, սակայն դեռ որոշակիորեն մահմեդական միջավայրի ազդեցությունը կրող այդ երեխաների մեջ մայրենի լեզուն և պատմամշակութային արժեքների տարրական իմացությունն արմատավորելու նպատակով 1929 թ. սկզբին Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի միջոցներով Շարբ-Պետրոս ուղարկվեց մի երիտասարդ ուսուցիչ՝ Խաչիկ Հակոբյանը, որն այնտեղ հիմնեց մի կիրակնօրյա դպրոց՝ մեծ ներդրում ունենալով գյուղի պատանի բնակիչների հայեցի դաստիարակության հարցում[174]:

Երկու տարի անց մեծացող տղաներին երկրագործության վարման ժամանակակից եղանակներին ծանոթացնելու և այդ կերպ նրանց տնտեսական անկախացումը դյուրացնելու նպատակով Կ. Յեպեն ավելի նպատակահարմար համարեց ուսուցչին հատկացվող աշխատավարձով գյուղում մի գյուղատնտեսի պահել, ուստի նրա առաջարկով 1931 թ. սկզբին «Շարբ-Պետրոս» մեկնեց մասնագետ-գյուղատնտես Լուիզ Գարզանին[175], որն այնուհետև շուրջ երեք տարի իր գիտելիքներն ու փորձը նվիրաբերեց այդ և հարևան հայկական գյուղերի տնտեսական բարգավաճմանը[176]: Բացի այդ՝ Յեպեն կարողացավ միջոցներ հատկացնել նաև բժշկի աշխատավարձի համար: Այդ պարտականությունը հանձնարարվեց դր. Զաքարիա Կիլեդյանին, որը 1929 թ. դեկտեմբերից ձեռնամուխ եղավ Շարբ-Պետրոսի և տարածքի մյուս՝ նաև մահմեդական գյուղերի բնակչության բուժսպասարկման աշխատանքներին[177]:

Նշված միջոցառումների շնորհիվ գյուղի առօրյան արագորեն մտավ իր բնականոն հունը: Նրա երիտասարդ բնակիչներն, անցնելով կրթության և դաստիարակության նախապատրաստական փուլը, իրենց նման փրկագնված աղջիկներից ընտրեցին իրենց կյանքի ուղեկիցներին և ստանալով հողամաս, տուն, անասուններ ու սերմացու՝ կարճ ժամանակում դարձան միանգամայն ինքնուրույն[178]: Նոր բնակավայրը 1931-ին արդեն դարձել էր մի պատկառելի գյուղ, որի՝ գերազանցապես «փրկագնված» տղաներից և

172 **Jeppe K.,** Das Kolonisations-Unternehmen in Charb-Bedros, „Orient im Bild", 1928, S. 3-4. Հմմտ. **Gaszczyk L.,** Im gesegneten Lande Mesopotamien, „Orient im Bild", 1932, S. 26.

173 Տես նույն տեղում: Գյուղում հաստատվեցին նաև մոտ երկու տասնյակ փախստական ընտանիքներ: Տես **Jeppe K.,** Das Kolonisations-Unternehmen in Charb-Bedros, „Orient im Bild", 1928, S. 4.

174 Տես **Gasczyk L.,** Unser neuer Lehrer in Charb-Bedros, Chatschik Hagopian aus Aleppo, geb. 1898, „Orient im Bild", 1929, S. 80. Մի քահանայի կանոնավոր այցերի միջոցով ապահովվեց նաև գյուղի բնակիչների հոգևոր-եկեղեցական կարիքների բավարարումը: Տես **Jeppe K.,** An die lieben Freunde, die bisher uns den Lehrer für unsere Dörfer unterhalten haben, „Orient im Bild", 1932, S. 3:

175 Տես նույն տեղում: Հմմտ. **Schäfer R.,** Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1931, ebd., S. 11.

176 Լ. Գարզանին իր հանձնառությունն ավարտեց ու վերադարձավ միայն 1934-ին: Տես **Schäfer R.,** Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, „Orient im Bild", 1934, S. 11.

177 Տես **Schäfer R.,** Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1930, „Orient im Bild", 1931, S. 21.

178 Տես **Gasczyk L..,** Im gesegneten Lande Mesopotamien, „Orient im Bild", 1932, S. 26.

աղջիկներից բաղկացած բնակիչների թիվը հասնում էր շուրջ 200-ի[179]: Սակայն, քանի որ ինչպես Թել-Սամեն և Թել-Արմեն գյուղերի, այնպես էլ Շարբ-Պետրոսի բնակիչները հողի սեփականատերեր չէին, իսկ 1920-ականների վերջին Սիրիայի ներքաղաքական իրադրությունը բավական նպաստավոր էր դա իրագործելու համար, Կ. Յեպեն և Մ. Մելքոնյանը վճռեցին հիմնել մի նոր գյուղ ևս, որի բնակեցումը պետք է կատարվեր հողի սեփականատիրության սկզբունքով, և որն այդպիսով պետք է հավակներ կենտրոնատեղի և հաստատուն հանգրվան դառնալու սիրիական գյուղաշխարհում սփռված բոլոր հայերի համար[180]: Առանց հապաղելու նրանք անցան գործի, և 1930 թ. գարնանը Թել Աբիաթից Հալեպ տանող ճանապարհի վրա, Շարբ Պետրոսից հարավ ընկած մի ընդարձակ վայրում հիմնվեց թվով չորրորդ՝ Թինեի գյուղը[181], որի բնակեցման՝ սկզբնական փուլում պահանջվող ծախսերի մի զգալի մասը՝ մոտ մեկ քառորդը, հատկացվեց Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի կողմից[182]: Նշված գյուղերի միջոցով, այսպիսով, Կ. Յեպեն հանգրվան և հավաքատեղի ստեղծեց ոչ միայն «տափաստանի կարոտով» ապրող՝ ազատագրված հայորդիների, այլևս գյուղատնտեսությամբ զբաղվելու ձգտում ցուցաբերող ճամբարաբնակների և առհասարակ սիրիական գյուղաշխարհում դեգերող՝ այլ անօթևան հայերի համար: Դա, ինչպես արդեն լուսաբանվել է, հնարավոր դարձավ գլխավորապես Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի նյութական աջակցության շնորհիվ, որն այդ ձեռնարկումները կարևորում էր ոչ միայն փախստականների սոցիալական պայմանների բարելավման, այլև առհասարակ հայ ժողովրդի՝ խախտված «մասնագիտական հավասարակշռությունը» վերականգնելու առումով[183]:

1934-1938 թթ. ստեղծված ծայրահեղ ծանր իրադրության հետևանքով Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի եկամուտները 1934-ին նվազեցին 12,07 տոկոսով[184]: Չնայած ընկերությունը մյուս միսիոներական և բարեգործական կազմակերպությունների համեմատ նվազագույն նյութական կորուստներն ունեցավ, ինչը պայմանավորված էր նշված արգելքների դեմ նրա ցուցաբերած հետևողական դիմակայությամբ, այնուամենայնիվ մասնաճյուղերին նախատեսվածից պակաս առաքվեց շուրջ 26.000 մարկ, որի հետևանքով Հալեպում աշխատանքների նախկին ծավալների պահպանումը դարձավ անհնար, և Կ. Յեպեն հարկադրված եղավ մշտական խնամքի տակ գտնվող

179 Տես **Hetzel G.,** Zu Misak nach Tineh, „Orient im Bild“, 1931, S. 59.

180 Տես նույն տեղում: 1920-ական թթ. վերջին հետևելով Յեպեի օրինակին՝ Հալեպի, Բեյրութի և Ալեքսանդրետի ճամբարներում գտնվող հայ փախստականների գյուղաբնակեցման ծրագրեր էր իրականացնում նաև Ազգերի լիգայի կողմից հովանավորվող Միջազգային աշխատանքային ծառայությունը, որի կողմից հիմնված գյուղերի բնակիչներն ունեին հողի սեփականության իրավունք: Տես **Schütz P., Künzler, J.,** Reise nach dem inneren Vorderasien, „Orient im Bild“, 1928, S. 58. Հմմտ. **Künzler J.,** Reise nach Innerasien von Dr. Schütz und Jakob Künzler, ebd., S. 45. Հմմտ. **Künzler, J.,** Die Siedlungen für die Armenier, „Orient im Bild“, 1930, S. 22.

181 Տես **Hetzel G.,** Zu Misak nach Tineh, „Orient im Bild“, 1931, S. 59.

182 Տես **Jeppe K.,** Die Dorfarbeit, trotz Hungers und Dürre gerettet, „Orient im Bild“, 1933, S. 34. Այդ գումարը կազմում էր 282,67 ֆունտ ստեռլինգ: Տես նույն տեղում:

183 «Պատերազմի ընթացքում հայ ժողովուրդը բռնի դուրս եկավ մասնագիտական հավասարակշռությունից,- գրում էր ժամանակակիցը: -Գյուղական ազգաբնակչությունը գրեթե վերացավ, և մնացել են արհեստագործներն ու առևտրականները: Այդ իսկ պատճառով չափազանց կարևոր է, որ հայ ժողովրդի երեխաները դաստիարակվեն գյուղում՝ դարձյալ հողի հետ կապվելու համար»: Տես **Künzler J.,** Reise nach dem inneren Vorderasien, „Orient im Bild“, 1929, S. 5.

184 Տես **Schäfer R.,** Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, „Orient im Bild“, 1935, S. 11.

երեխաների թվակազմը որոշ չափով կրճատել՝ համեմատաբար բարվոք պայմաններում գտնվող 46՝ այդ թվում 23 կերակրվող և 23 որբ (միածնող) երեխաների դուրս գրելով իր խնամացուցակներից[185]: Փոխարենը, սակայն, ծայրահեղ խնայողությունների գնով նա Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի հատկացումներից կարողացավ միջոցներ տնտեսել մի շարք այլ կարևոր ձեռնարկների համար: Դա վերաբերվում էր մասնավորապես Թինեհի դպրոցին, որը Յեպեն հիմնեց 1934-ին՝ այնտեղ աշխատանքի նշանակելով մի հայ ուսուցչուհու[186]: Բացի այդ՝ ընտանիքների հիվանդ կերակրողներին ապաքինման և կազդուրման առավել նպաստավոր պայմաններ տրամադրելու համար նա 1934-ին կարողացավ Թինեհում կառուցել նաև մի առողջարանային համալիր: «Գյուղում մենք առողջարան ենք կառուցում,- գրում էր նա իր՝ 1934-ի հոկտեմբերի 11-ի նամակում: -Այն նախատեսված է հայրերի համար, որոնք այնքան մեծ անկում են ապրել, որ միայն հանգստի և ուրախ միջավայրում իրականացվող շատ լավ խնամքի միջոցով կարող են վերականգնվել: Ես միշտ այն կարծիքին եմ, որ երեխաներին ամենամեծ օգնությունն այն կլինի, եթե կարողանանք նրանց ծնողներին պահպանել: Կառուցել եմ նաև սենյակներ, որտեղ կարող են ամբողջ ընտանիքներ տեղավորվել...»[187]:

Յեպեն իր մշտալարված գործունեության ընթացքում հարկադրված էր շարունակ ապրել նաև Գերմանիայի ներքաղաքական զարգացումներով պայմանավորված տագնապները, զարգացումներ, որոնք ամեն պահ կարող էին իր փրկարար աշխատանքների համար ճակատագրական լինել: Անօրինակ փորձություններ հաղթահարած՝ նրա նյարդերը, սակայն, այլևս ի վիճակի չէին դիմագրավել նոր տագնապներին, և ծանր հիվանդությունից հետո՝ 1935 թ. հուլիսի 7-ին, 59 տարեկան հասակում նա վախճանվեց[188]:

Կ. Յեպեի մահը ցնցող ազդեցություն գործեց ոչ միայն տարագիր հայերի, այլև նրանց գերմանացի բարեկամների վրա: Թվում էր, թե ի դեմս նրա կյանքից հեռացավ ոչ միայն Հալեպի «հայերի մայրը», ինչպես նրան սովորաբար կոչում էին իր պաշտպանյալները, այլև օգնության գործի «կենսական նյարդը», առանց որի այն այլևս չէր կարող շարունակվել[189]: «Երբ նրա ծանր հիվանդության առաջին լուրը հասավ մեզ,- գրում էր Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի նախագահ Պաուլ Ֆլայշմանը,- մենք սարսափեցինք և, քանի որ անթիվ հայ որբերի և այրիների համար կատարվող սիրո ծառայությունը առանց նրա անկարող էինք պատկերացնել, չէինք կարողանում հաշտվել բաժանման մտքի հետ և կառչում էինք ամեն մի տեղեկությունից, որ մեզ թույլ էր տալիս հուսալ...»[190]:

Կարեն Յեպեն, այնուհանդերձ, այնքան ամուր հիմքերի վրա էր դրել իր հայանվեր փրկարար աշխատանքները, որ դրանք նրա մահից հետո՝

185 Տես նույն տեղում:
186 Տես **Jeppe K.,** Agnes Aharonjan, die Lehrerin für die Lösegeldarbeit in Tineh, ebd., S. 7-8.
187 **Jeppe K.,** Brief Karen Jeppes, „Orient im Bild“, 1934, S. 42.
188 Տես Zum Tode Karen Jeppes, „Orient im Bild“, 1935, S. 30. Հալեպի հայ համայնքը և եկեղեցին կամենում էին Յեպեի աճյունն ամփոփել նրա՝ «այրիների և որբերի» գաղութի կենտրոնում գտնվող՝ Ս. Լուսավորչի եկեղեցում, սակայն անհայտ պատճառներով կառավարությունը դա արգելեց, որի պատճառով նա թաղվեց գերեզմանատանը: Տես նույն տեղում: Տես նաև **Hetzel G.,** Die Unvergeßliche, „Orient im Bild“, 1937, S. 5.
189 Տես **Gaszczyk L.,** Menschen aus Tineh, „Orient im Bild“, 1934, S. 34. Հմմտ. Zum Tode Karen Jeppes, „Orient im Bild“, 1935, S. 30. Տես նաև **L. Gaszczyk**, Notruf aus Aleppo!, „Orient im Bild“, 1936, S. 18.
190 **Fleischmann Paul,** Karen Jeppe, „Orient im Bild“, 1935, S. 29.

նրա արմատավորած սկզբունքների հիման վրա, շարունակվեցին նրա փոխանորդի՝ Լեոպոլդ Գազչուկի և մյուս օգնականների կողմից ընդհուպ մինչև 1939 թվականը:

Եզրակացություններ

Դանիուհի օրիորդ Կարեն Յեպեն իր ողջ գիտակցական կյանքը նվիրաբերեց ցեղասպանության ենթարկվող հայությանը փրկելու գործին: Համիդյան կոտորածներից հետո նա Ուռհայում ստանձնեց մեծաքանակ հայ որբերի խնամքն ու դաստիարակությունը: Մեծ եղեռնի տարիներին, բազմիցս վտանգելով իր կյանքը, նա ջանում էր զորավիգ լինել դեպի մահ ուղարկվող ժողովրդին, իսկ Աշխարհամարտից հետո ձեռնամուխ եղավ համալիր հայափրկիչ աշխատանքների, որոնց կենտրոնատեղին Հալեպն էր: Նա կարողացավ ազատագրել Եղեռնի ընթացքում առևանգված և մահմեդականների տներում ու հարեմներում բռնի պահվող շուրջ երկու հազար հայորդիների և միաժամանակ բազմակողմանի գործունեություն ծավալեց Հալեպում կուտակված՝ ցեղասպանությունը վերապրած բազմահազար հայերին սովամահությունից և հիվանդություններից փրկելու համար: Նրա ջանքերով անհուսալի ծանր վիճակում գտնվող այդ մարդիկ ոչ միայն փրկվեցին, այլև համախմբվելով Յեպեի կողմից հիմնադրված նոր բնակավայրերում, կարողացան պահպանել իրենց ազգային հավաքական ինքնությունն ու վերստին ձեռնամուխ լինել ստեղծագործ աշխատանքի:

Աշոտ Ն. Հայրունի – Բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի ակադեմիկոս: Ունի հրատարակված 5 գիտական մենագրություններ և շուրջ 150 գիտական հոդվածներ: Զբաղվում է Հայկական հարցին, Հայոց ցեղասպանությանը, Առաջին աշխարհամարտին և հայ-գերմանական հարաբերություններին վերաբերող խնդիրներով:

Summary

KAREN JEPPE'S MISSION OF SALVATION. A COMPREHENSIVE VIEW

Part two. The activities of the great humanist in Aleppo

Ashot N. Hayruni

Key words – Karen Jeppe; Urha; Aleppo; Genocide (Mets Yeghern) ; League of Nations; Johannes Lepsius; German Eastern Mission; liberation of the kidnapped Armenians

For the first time the present article fully covers the pro-Armenian activity of the great humanist, a Danish missionary Karen Jeppe. The activity started in

1903 and was spread in various directions: solicitude for orphans and widows, support to deported Armenians during the Genocide, liberation of Armenian children and women captivated in Muslim homes and harems, provision of material and moral support to thousands of Armenian refugees gathered in Aleppo, as well as a creation of new settlements in Syria for refugees and liberated Armenians and so on. Jeppe dedicated her entire life to the rescue efforts, which had invaluable significance for the salvation of thousands of Armenians. The salvation included an entire range of work including medical care, education, and upbringing. Jeppe gave great importance to the fact that liberated Armenians could live independently and at the same time have a worthy place in the Armenian national-collective life. Therefore, she created all possible conditions for them to receive not only targeted education and upbringing but also to obtain some specialization. The article, which for the first time puts into scientific circulation many valuable sources simultaneously provides important information about other people and organizations that contributed to rescue activities undertaken by Jeppe.

Резюме

СПАСАТЕЛЬНАЯ МИССИЯ КАРЕН ЕППЕ. ВСЕСТОРОННИЙ ВЗГЛЯД

Часть вторая. Деятельность великой гуманистки в Алеппо

Ашот Н. Айруни

Ключевые слова – Карен Еппе, Урха, Алеппо, Геноцид армян, Лига наций, Иоганнес Лепсиус, Немецкая восточная миссия, освобождение похищенных армян.

В статье впервые полностью освещается арменофильская деятельность великого гуманиста Карен Еппе, которая, начиная с 1903 года, распространилась по разным направлениям: попечение сирот, оказание помощи выселенным во время геноцида армянам, освобождение армянских детей и женщин, которых насильно держали в магометанских домах и гаремах, оказание материальной и моральной поддержки накопившимся в Алеппо многотысячным армянским беженцам, создание в Сирии новых местожительств для беженцев и освобождённых армян и т.д. Эти спасательные работы, которым Еппе посвятила всю свою жизнь, имели неоценимо важное значение для спасения многотысячных армян. Это спасение включало в себя целый комплекс работ, в том числе медицинское обслуживание и организацию образования и воспитания. Еппе придавала большое значение тому обстоятельству, чтобы освобожденные армяне смогли самостоятельно существовать и одновременно занимать почетное место в жизни армянского народа. Поэтому она создала все возможные условия, чтобы они не только получили целевое образование и воспитание, но также получили

определенную специальность.

Статья, с помощью которой впервые были включены в научный оборот множество ценных первоисточников, одновременно сообщает важную информацию о других деятелях и организациях, которые старались внести свой вклад в предпринятые и осуществляемые Еппе спасательные работы.

REFERENCES

1. **Tcholakian J.**, Karen Jeppe. Haj goghgotajin jew weratsnundin het, Halep, „Arewelk“, 2001.